



ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿԵԱՆ,

'Ի ՍՈՓԻԱՅԷ ՄՍԵՐԵԱՆՑ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

„Ա՛՛՛ Է անագան քան ոչ հրբեք“ (Ա՛՛՛):

ՏԵՏԲ Բ.—(ՄԱՐՏ-ԵՊՐԻՒ.)—1881 ԵՄԻ

ԿՆՆՈՒՑՈՒՄՆ

- „ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ“ հանդիսի նիւթն է՝ Պատմական, Բանասիրական, Բաղաբական և Ազգային Գիտելիք:
- „ՓԱՐՈՍՆ“ լինելով պատկերազարդ հանդէս՝ խնդրում է պատուելի ազգայնոց առաքել նորան, տպագրութեան համար, Ազգային հեղինակաց և երևելի անձանց, Հայաստանի հնութեանց և նշանաւոր անդէաց պատկերներն, նոցա համառօտ նկարազրութիւններով:
- „ՓԱՐՈՍԻ“ խմբագրութիւնն ուրախութեամբ կընդունէ տպագրութեան համար ազգային մատենագրութեան և ազգային կենաց վերաբերեալ յօդուածներ, ազգային վէպեր, ոտանաւորներ, և այլն:
- „ՓԱՐՈՍՆ“ հրատարակի ՚ի Մոսկուա վէջ անգամ ՚ի տարին, այն է՝ երկու ամիսն մէկ անգամ:
- „ՓԱՐՈՍԻ“ տարեկան գինն հանդերձ առաքմամբ է 5 ռուբլի:
- „ՓԱՐՈՍԻ“ ներկայ ամի տետրերն առանձին չեն վաճառվում:
- „ՓԱՐՈՍԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆ հասցէն այս է. Москва, Мещаникова башня, домъ Миловакова. (Մոսկուա. Մէնշիկովա բաշնեայ, տուն Միլովանովի):

Ի ՄՈՍԿՈՒԱ

IMPRIMERIE A. A. GATZOUK.

à Moscou, Boulevard de Nikitsky, maison Gatzouk.

1881.

Հանդիսիս ներկայ տեսիս հիս ուղարկվում է պատուելի բաժանորդաց

ՄՐԻՆԱՅԻՆ ԴԵՐՄԱՅՍ ՊԵՏՐՈՒԼԻՐԻ ՆՈՐ ՆԿԱՐՈՒԱԾ ՎԻՃԱՍԻՅԱԿ ԿԱՏԿԵՐՆՆԸ:

Նոյն պատկերն, առանձին ստանալ ցանկացողներն, վճարում են իւրաքանչիւր օրինակի համար 1 ո.



ԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ պատկերազարդ հանդէսն 'ի Տէրութենէ ստացեալ նոր թոյլառութեան համաձայն, պիտի հրատարակուի 'ի տարին վեց անգամ, այն է՝ Երկուամսին մէջ անգամ (Յունուարին, Մարտին, Մայիսին, Յուլիսին, Սեպտեմբերին և Նոյեմբերին): Նորա իւրաքանչիւր տարին պիտի բովանդակէ իւր մէջ 2½—3 քառածալ թերթ 10—12 պատկերներով:

Տարեկան գինն, չը նայելով թերթերի և պատկերների աւելման, մնում է նոյն, այն է՝ 5 ռուբլի հանդերձ առաքմամբ, կանխիկ վճարելի:

Խոստացան միշտ աշխատակցելու մեզ՝ պ. Զարմայր Մ. Մսերեանց, Տ. Ասողիկ*, Ս. և Օ. Մոսկուպում.— պ. Արմենակ Միւնի*, Մոծակ* Տփլիսում.— պ. Կ. Ազամյանեանց և Զիւնի* Աղերսանդրապօլում.— պ. Տ. Փ., պ. Տիգրան-Աշոտ*, պ. Միլլա Մսերեանց, և պ. Լուսարար-Փարոսի* Կ. Պօլսում.— պ. Գ. Մսերեանց՝ Զմիւռնիպօլում.— պ. Յ. Չաքրեան՝ Զէյթունում, և այլք՝ որոց անուններն դեռ իրաւունք չունենք հրատարակելու: Ունիմք նաև սեպհական թղթակիցք՝ Լոնդոնում, Փարիզում, Կ. Պօլսում, Կարին, Վան, Հսպահան, Բագու, Երևան և այլ տեղեր, որք միշտ պիտի հաղորդեն մեզ ազգային տեղեկութիւններ և ճոխացնեն մեր հանդէսը ազգային պատկերներով:

Ծանօթ: Աստղով նշանակուած անուններն կեղծանուն են (փակագծով):

ՏԱՐԵՑՈՅՑ ՓԱՐՈՍԻ

1881 թուականին քրիստոսի և ՌՅԼ-ՌՅԼԱ (1830—1831) ազդիս Հայոց:

ՏԱՐԵԹԻԻՔ:

Ի սկզբանէ աշխարհի	7.389
Ի սկզբնաւորութենէ Հայոց թուակա՛խ	ՌՅԼ.
Ըստ Հայկայ շրջանին	4.372
Գ. Շրջանին Հայկայ	1.452
Փոքր թուոյն Հայոց ըստ Աղարիայի	ՄԿԵ.

ՏԱՐԵՄՈՒՏՔ:

Բուն թոյն Հայոց 4.373	Օգոստ.	11
Հայոց թուականին ՌՅԼԱ	»	13
Փոքր թուոյն Աղարիայի ՄԿԶ	Մարտի	21
Գ. Շրջանին Հայկայ 1.453	»	9
Թուականին քրիստոսի 1882	Յունուարի	1

ՀԱՄԱՌՕՏ ԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԱՅՈՅՑ 1881 ԱՄԻ:

Օր ԾՆՆԻՒՄ	Ի Յուն.	6	Համբարձումն	Ի Մայիսի	21	Բարեկ. վարադ. Խաչ .	Ի Սեպտեմ.	20
Միջոց ուտիք, աւուրք		27	Հոգեգալուստ	»	31	Միջոց ուտիք, շաբաթք	Եօթն.	
Բարեկենդան Առաջ	Ի Փետրվ.	1	Բարեկ. Ս. Լուսաւորչի .	Ի Յունիսի	21	Գիւտ Խաչ	Ի Հոկտ.	25
Օր ՏԵԱՌՆԸՆԳՆԱՌԱԶԻ		14	ՎԱՐԴԱՎԱՌ	Ի Յուլիսի	19	Բարեկ. Յիսնակաց . . .	Ի Նոյեմբ.	15
Բուն բարեկենդան	»	22	Միջոց շաբաթք պահօրք	2 որք.		Բարեկ. Ս. Յակ. պհ . . .	Ի Գեկտ.	6
Օր Աւետման	Ի Ապրիլի	7	ԱՍՏՈՒԱՄԱՄԻՆ	ՍՕգոստ.	16	Ս. Յակոբ	»	12
ԶԱՏԻԿ	»	12	Միջ. շաբ. պահօրք	2 որք.		Միջոց ուտիք, աւուրք		17
Երեւման Խաչ	Ի Մայիսի	10	ԽԱՉԱՅԻՐԱՅ	Ի Սեպտեմ.	13	Օր բարեկ. Ծննդ	Ի Գեկտ.	29

ԱՌՈՒՐՔ ՄԱՀՈՒՄՆ ԵՐԵՒԵԼԻ ՀԱՅՎԱԶԱՆՑ:

* Փետրվար. 6. մահ Յովհաննու Յովակիմեան Լազարեանց (1857):—13. մահ Ներսէս Ե. կաթողիկոսի ամենայն Հայոց (1857):—Մարտ. 19. մահ Յովսէփայ Գ. կաթողիկոսի (1801):—Ապրիլ. 5. մահ Միքայէլի Միսնասարեանց (1880):—8. մահ Գաբրիէլ արք եպիսկոպոսի Այվազեանց (1880):—16. մահ Ճանիկայ Արամեան (1879):—26. մահ Ստեփաննոսի Նաղաւրեանց (1879):—Մայիս. 24. մահ Յարութիւն վարդ. Աւամզարեան (1834):—28. մահ Ղուկասու Գ. Պալղազարեան (1878):—Օգոստոս. 2. մահ Մսերայ Մ. Մսերեանց (1873):—14. մահ Յովհաննու Գաւթեան Լազարեանց (1879):—19. մահ Միքայէլ արքեպիսկոպոսի Սալանթեան (1851):—22. մահ Մատթէոս կաթողիկոսի (1865):—29. մահ կարապետ վարդ. Շահնազարեան (1865):—Հոկտեմբեր. 14. մահ Ղազարայ Յովակիմեան Լազարեանց (1871):—Գեկտեմբեր. 9. մահ Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց (1871):

ՀԱՅԵՐԷՆ ԼԻԱԳԻՐՔ ԵՒ ԱՄՍԱԳԻՐՔ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ 1881 ԱՄԻ:

1. Արարատ՝ ամսագիր կրօնական, պատմական, բանասիրական, բարոյական և ազգային, հրատարակի իւրաքանչիւր ամսոյ վերջում: Տարեկան գինն է՝ 4 ո.
2. Մշակ՝ հանապազօրեայ լրագիր քաղաքական և բանասիրական: Տարեկան գինն է՝ 10 ո.
3. Մեղու-Հայաստանի՝ հանապազօրեայ լրագիր քաղաքական և բանասիրական: Տարեկան գինն է՝ 10 ո.
4. Փոքի՝ ամսագիր բանասիրական: Տարեկան գինն է՝ 10 ո.
5. Պոսի՝ լրագիր գրականական, պատմական և մանկավարժական: Տարեկան գինն է՝ 4 ո.



ԵՐՐՈՐԴ

ՏԱՐԻ

ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆԻՒՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՏԵՏՐ Բ

ՄԱՐՏ—ԱՊՐԻԼ

1881 ԵՄԻ

ՎԵՀԱԶՆԵԱՅ ՏԻԿԻՆ ԿԱՏԱՐԻՆԷ ԼԱԶԱՐԵԱՆՑ



ԱԶԱՐԵԱՆ
հաշակաւոր
և փառաւոր
առհմն, որ
համարեալ թէ
երկու հա-

լիւր տարւոյ ընթացքում
եղած էր Ռուսաստանի
Հայերի համար քաջ
պաշտպան և նոցա լուսա-
ւորութեան ու զարգացման
նպաստող, զըրկուեցաւ ՚ի
ցաւ ամենայն ազգասէր
սրտի իւր վերջին բարե-
պաշտ անդամից, որ չէր
անձանօթ մեզ ամենե-
ցունցս իւր մարդասիրա-
կան գեղեցիկ գործերով :

Ընցեալ 1880 ամի
Նոյեմբերի 11-ին կնքեց
Պարբուրգի մէջ, իւր
մահականացուն, զկնի եր-
կարասե հիւանդութեան,
ի հասակի 76 ամաց, Վեհազնեայ Տիկինն Վա-



ԿԱՏԱՐԻՆԷ Մ. ԼԱԶԱՐԵԱՆՑ
վ. հ. թ. 11 Նոյեմբ. 1880.
ЕКАТЕРИНА ЛАЗАРЕВА. CATHERINE LAZAREFF.
(Պատկերս նկարեցաւ և փորագրեցաւ յատուկ մեր հանդիսի համար)

անմահ յիշատակի Խա-
չատրոյ Յովակիմեան Վա-
զարեանց, և զուտար Հայ-
կայն Իշխանին Մանուկ
Պէյի Միրզայեան, որոյ
կենաց և գործոց պատ-
մութիւնն ապագրվում է
հանդիսիս մէջ :

Հանդուցեալ Վատա-
րինէ Մանուկեան Վազա-
րեանց, որոյ ճիշդ կենդա-
նագիրն ներկայացնում
ենք այս անգ, ծնաւ ներ-
կայ տասնևիններորդ դա-
րուս սկզբում Բուլղարիոյ
Ռուսջուրք քաղաքում :
1809 թուականին, նա,
իւր ծնողաց հետ ՚ի մի-
ասին՝ Տաճկաստանում
ծագած խռովութեանց
պատճառաւ, փախցեցաւ
նախ ՚ի Պուրքէշ և ՚ի
Թրանսիլվանիա, և ապա
1816 թուականին ՚ի Ռու-
սաստան, և անցուց իւր
մատաղ օրերը, մինչև
յճնգեառասանամեայ հասակն, Բեսարաբիոյ Հըն-
չեշա զիւղաքաղաքում, որ իւր հօր նոր կալու-

ածոց մինն էր, ստանալով գեղեցիկ ուսումն և կրթութիւն իւր հայասէր և բարեպաշտ ծնողաց տան մէջ: 1819 թուականի Հոկտեմբերի 13 ին՝ Օրիորդ Աստարինէն, որոյ գեղեցկութեան և ոգւոյն առաքինի բարեմասնութեանց համբաւն տարածուած էր արդէն ամեն կողմ, ամուսնացաւ Վահագն Խաչատրոյ Յովհաննէան Վազարեանցի հետ: Եյս ամուսնութենէս ունեցաւ նա երեք զուսար և մի որդի Յովհաննէս անունով, որ լինելու էր միակ ժառանգ հռչակաւոր Տան Վազարեանց, եթէ անակնկալ մահն չկարձէր նորա կենաց թիւը եօթնամեայ ծաղկափթիթ հասակում: Եյս կորուստս արգարև յոյժ մեծ էր և զգալի ոչ միայն մանկանս ծնողաց համար, այլ և բոլոր Ռուսաստանի Հայոց համար, ըստ որում նորանով արդէն վերջացած համարուելու էր Վազարեան Տոհմ՝ ըստ իւր արական ուղիղ գծի:

Վահագնեայ Տիկինն Աստարինէ Վազարեանց, որպէս իւր ամուսնոյ օրերով, նոյնպէս և նորա մահուանէն յետոյ, շատ սարինների ընթացքում, մինչև իւր մահն, չէր զազարում բարեպաշտական և մարդասիրական գործեր կատարելու թէ յայանա-

պէս և թէ ծածուկ: Ուստի բնական զարմանալի չէ այն արտոմութիւնն և արատաւքն, որք երևում էին ամենեցունց երեսների վերայ, որք ժողովուած էին նորա դագաղի չորս կողմում նորա յուզարկաւորութեան ժամանակ: Թաղուեցաւ նա Պետրբուրգի Հայոց հանգստարանի եկեղեցւոյն մէջ՝ իւր ամուսնոյ և որդւոյ գերեզմաններին մօտ:

Հայոց ազգն թէպէտ զրկուեցաւ այսպէս Վազարեան Տոհմի վերջին փառաւոր անդամից, բայց դեռ զրկուած չէ նորա ժառանգներից յիգական սեռէ: Գեռ կենդանի են նորա երեք զուսարներն, յորոց երկրորդն է ամուսին Պայազատ Յովհաննիսի Գեղանեանց, և երրորդն՝ Իշխան Աիմօնի Եբամէլեկեանց, որին և անցաւ տոհմական մականուննս «Վազարեանց»:

Յոյս կայ, որ «Եբամէլեկ-Վազարեանց» տունն շարունակելով հանգուցեալ Վազարեանց բարերարաց բարեպաշտական և ազգասիրական գործերն, անշեջ պահէ Հայոց ազգի մտաց մէջ այդ փառաւոր Տոհմի հռչակաւոր անունը, որ ոչ ոք կարող է մոռանալ:



Սիրուն էր իմ հայրենիք,
Պարտիզաւոր գեղեցիկ.
Իւր տեսիլը սիրալի,
Բաղցր էր աչաց տեսողին:

Հռչակաւոր էր անուամբ,
Լայնատարած սահմանով.
Պարծանաց էր նա տեղի,
Ողջոյն ազանց օրօրան:

Նա իւր պայծառ ջրերով,
Իւր ամպածեմ գագաթով.
Չնաշխարհիկ պարծանք էր,
Հայրենիքիս պարտիզին:

Հայր ունէի թագազարմ,
Իւր պարտիզին տէր պաշտպան:

Եւրդ կեանքը կարճատև,
Եղև բախտի հարուածով:

Տեսա կեանքիս օրերով,
Ճակատագրին համաձայն.
Հայրս առեց մեզ յետին,
Իւր ողջոյնը ասելով:

«Մնաք բարեաւ որդեակք իմ,
«Ես գնում եմ դարերով.
«Մահուն ծածկիլ սե .քօղով,
«Հողակաւոյց դամբանում:

«Գուք սիրեցէք հայրենիք,
«Որոյ կաթով զարգացայք.
«Եզնիւ հոգւով զգացէք,
«Հայրենիքն է ձեր պարծանք»:

Օրսենսիոս Գ. Հայրունի:

1881.

ՄԻՐԱՅԵԱՆ ՄԱՆՈՒԿ ՊԷՅ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐՈՒՅ ՆՈՐԱ *)

ԳԼ. Է.

Բազմանթ Օղլու՝ որ միւսանգամ ձեռս ամբարձեալ գոռոզանայր ընդդէմ Պետութեան, ՚ի մտի եղ ՚ի հարկի կացուցանել զերկիրն Վլախաց, առ ՚ի կարող լինել հայթայթել նովին զպէտս համ-

*) Շարունակութիւն, տես հանդիսիս նախընթաց տետրն:

բարոյ ամբողջին Վխախայ: Եւ կարգեաց առ այս՝ զոմն Մանալ Իպրահիմ՝ այր հսկայանման (այն՝ որ զինուորեալն էր երբեմն առ Ելեօ բելշին**)

սուեալ ՚ի ձեռս նորա ամբօխ սրիկայից ոչ սակաւ: Դիւրամուտ լեալ Մանալայ յայս երկիր, որոյ

***) Սա գլխաւեցաւ ՚ի պաշարման ամբողջին Վխախայ, որպէս տեսցի ՚ի գլ. ԺԲ.

ամբողջութիւն ինչ ուրիշ չգոյր, սկսաւ շուրջ ընդ ամենայն տեղիս յառ և յաւար արշաւել. յորմէ յահի լեալ և Պէյլին և Պոյարացն՝ որ կային ՚ի Պուքրիշա, անկան փախտալ աչար անդր: Մեծ էին արհաւիրք աղետիցն. այլ ոչ ընդերկար տեւցին: Զի զոր յօգն հասեալ անդր ՚ի Թիրսնիքլեայ՝ տագնապեցոյց զՄանավ նհանջիւ ընդ կրունկ մինչև ՚ի Վխաին:

Յայսմանէ ՚ի վրէժինդրութիւն զրգռեալ Բագվանթ Օղլու՝ յեա ժամանակաց ինչ արձակեաց զՄանավ ՚ի սահմանս իշխանութեանն Թիրսնիքլեայ՝ այրեացաւեր առնել զամենայն զչէնս նորա: Ընդ մտանել Մանավայ ՚ի Թուրքագանն աւան՝ թէպէտ և պաշարեցաւ յեղակարծում ՚ի Պայրաքտարայ, այլ զքաջութեանն անտխղճ պահեաց զանուն ուժգին և անվհիւր զիմակալութեամբ ՚ի պաշարմանն իբրև ամիսս երկու:

Եղև անգանօր ՚ի նոյն աւուրս գեանաչարժ սաստիկ յոյժ, յորմէ ժամանակ պատեհի փախտանն առեալ Մանավայ՝ հանդերձ երկօրումք ոմամք յիւրացոյն՝ անկաւ խառնամուխ զբանակաւն Պայրաքտարայ, մինչ զեռ տակաւ յերբի կայր երկիր, և զամենայն զընդդիմակացն բերանոյ որոյ զիպուցեալ անց ընդ մէջ նոցա, և զնաց ՚ի Միլիսթրիա: Աչ գոյն ինչ էր սպաքէն այս յանդուգն զիմագրաւութիւն Մանավայ՝ ընդ որ և Պայրաքտար անգամ զարմացաւ. բայց վաղ յինքն եկեալ փաշաման կրեաց նա յանհանձար խիզախմանէն: Զի յեա սուղ մի ժամուց ՚ի վերայ անցանկոյ, իբրև ետես՝ եթէ գործ մի օգտակար չգործեաց անառջնորդ զզօրան թողլով ՚ի պաշարման, ՚ի մօտ եղ անդրէն սուր ՚ի ձեռին երթալ հերձուղ զիշերայն զզօնդս թշնամոյն և մտանել միւսանդամ ՚ի Թուրքագան. և արար այնպէս: Ելլ հուսկ յետոյ անձեռնհաս լեալ ՚ի զիւր պաշարոյ անձնատուր եղև ՚ի Պայրաքտար:

Թիրսնիքլե՝ թէև թշնամի ոխերիմ էր աւազակաց, խնայեաց ՚ի նա և եթող զպատուհանն, միայն ՚ի շնորհս քաջութեանն և ՚ի խոստ ածեալ ոչ ևս աւազակել ուրիք՝ կարգեաց զնա ընդ իւր պաշտօնեայս. և ոչ այսչափ միայն՝ այլ և հայեցեալ ապա յառժամանակեայ ՚ի հանդարտ գնացն՝ յաւել ևս մեծապարզև մեծարել զնա, և տալ նմա գտուն, զազախնայս և զսարուկս ՚ի ծառայութիւն: Ելլ նմա այսու ամենայնիւ չեղև հնար ՚ի սպառթօթափել յանձնէ զաւազակութեան զբարսն՝ յոր հնացեալն էր ՚ի վաղուց:

Էր ՚ի կողմանս Քրայովայ վաներէց ոմն արկեալ ՚ի պաշտամանէ հրամանաւ Իփսիլանթիայ Պէյլին Վլահաց: Սա ծանօթ լեալ Մանավայ՝ կշիռ

բազում արծաթոյ խոստանայր նմա գրով՝ եթէ հնարեցի ամբառնալ զինքն ՚ի պաշտօն իւր նախկին: Յանկութիւն զիւրազիւտ շահուն ոչինչ զանգաղեցոյց զՄանավայ գրել ՚ի ծածուկ առ Իփսիլանթի օրինակ զայս. «Ասեմ՝ թէ այն ինչ որ հայր վանաց՝ առ որում թողեալ էի յաւանդի մարգարիտս իբրև ՚ի չափ ունկեաց երեսնից յանցանելն իմ ընդ Վալաքիա, անկեալ կայ այժմ ՚ի պաշտամանէ ձերով հրամանաւ: Եզա պարտ է զի կամ դուք ինքնին յանձն առջիք վճարել զզինս մարգարտացն, և կամ թոյլ տաջիք վանահօրն վարել զիւր պաշտօն, որպէս զի մարթացի նա զոր էառն յինէն՝ դարձուցանել առ իս»: Իբրև ընկալաւ Իփսիլանթի զայս թուղթ, անդէն իսկ գրեալ առ Մանուկ՝ ընդ որում բարեկամութեամբ կայր, միջնորդութեամբ նորա ծանոց զերս Թիրսնիքլեայ. և նա ոչինչ ամենեկն յերեսս բերեալ Մանավայ զյանցանսն, կոչեաց զնա լեկեայն, և սաստիւ պատուէր ՚ի վերայ եղ յուշի կապել միշտ զնախնդակ խոստումն յաղագս ՚ի բաց կալոյ յամենայն յափշտակութենէ. և յաւել նմա սպասնալիս մահու՝ եթէ երբէք զրժիցէ խոստմանն: Իսկ Մանավ տակաւին յամառեալ պնդեալ յանազգաւորութեանն՝ առաքեաց զգանձապետ իւր առ Իփսիլանթի՝ ասել ցնա՝ զի կամ զմարգարիտսն տացէ և կամ զվաներէցն կարգեցէ յառաջին պաշտամանն. «Դի ոչ զիս, ասէ, ՚ի զինուց մերկացուցեալ է Թիրսնիքլե, և ոչ զիման. և ես կարող եմ զնալ ՚ի Պուքրիշա և անդէն ՚ի սենեկի իւրում հատանել զզլուխ նորա»:

Յորժամ զայս ևս լուաւ Թիրսնիքլե ազգարարութեամբ Մանուկայ, ոչ ևս խնայեալ ՚ի կեանս ըմբոստացելոյն՝ ետ հատանել զզլուխ նորա և առաքել ՚ի Աոստանդնուպօլիս՝ ըստ որում ընդ բազում ժամանակս յաւար մտանեալ էր նորա զտեղիս տեղիս. ետ ՚ի մահ և զամենայն ընկերակիցս նորա, որք էին արք սպարաասնք՝ յանդուգնք՝ լիբք՝ փնասագործք, յափշտակողք և միայն ՚ի շնորհս քաջանուն իւրեանց առաջնորդի թողացեալք յայն վայր ՚ի տեսանել զարև: Հանդոյն սոցա և երէցն այն վանաց չմարթացեալ անձնապուր ՚ի մահուն կալ պատժոյ՝ ածաւ հրամանաւն Իփսիլանթեայ ՚ի Պուքրիշա և զլիատեցաւ:

Թօքթաթճըքլի ոմն անուն ՚ի բազում ժամանակաց հետէ ապաստմեալ էր ՚ի Տերութենէ՝ ընդ ձեռամբ ունելով զօնդս զօրաց Քրքճալը կոչեցեալ: Սա քանզի չմարթէր ՚ի բնիկ յիւրում գաւառին կալ յապահօվել զի դատաւճիռ մահու նորա արդէն իսկ հրատարակեալ էր, եկն կալաւ ամուր սպաստանի հանդերձ իւրովքն ՚ի լերինսն՝ որ ընդ



ՀԱՅ ԲԵՌՆԱԿԻՐԻ (ՀԱՄԱԼԵ) Ի Կ. ՊՕԼԻՍ:

Իւր-արեւել զիւր օրագրէն:

АРМЯНЕ НОСИЛЬЩИКИ (ХАМАЛЫ) ВЪ КОНСТАНТИНОПОЛѢ. || CROCHETEURS ARMÉNIENS (HAMALES) à CONSTANTINOPLE.

(Պատկերիս քիչէն պատրաստեցաւ յատուկ մեր հանդիսի համար Ի Շթուրթարա):



ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ ՍԷՆ-ՊԻԵՐ ԲԱՂԱԿԻ ՄԱՐՏԻՆԻԿԱՅ ԿԼԶԻՈՅՆ:
 (Ботанический садъ въ Сенъ-Пьеръ).

իշխանութեամբ էին Թիրսնիքընայ, և իբրև ազգ եղև նմա՝ մեկնիլ 'ի սահմանաց անտի, խտուրե ետ պատասխանի, և ասէ. «Եթէ արդարև այր զք այր իցէ Թիրսնիքըն, որպէս ասի, մի բանիւ, այլ արութեամբ քաջութեամբ վանեցէ զնս աստի»:

Ընդ այս բան նորա զայրացեալ Թիրսնիքընայ՝ խաղացոյց 'ի վերայ նորա զօրու ծանու զՄուստաֆա Պայրաքաար: Յորմէ 'ի նեղ անկեալ Թօքաթաթըքընայ՝ պարտութիւն խոստովանեցաւ: Եւ զն խոստանայր Թիրսնիքըն պաշտպան կալ նմա և չմասնել զնա աէրութեան՝ եթէ կամ անձնատուր լինիցի, ածաւ զէնքնից զնպոյն 'ի ձեռս՝ հանդերձ կահիւքն և կարասեօք և հարստութեամբ արծաթոյ: Բայց ապա Թիրսնիքըն խորամանկ բարոյիւք պատճառանս իմն յանձնէ կարկատեալ՝ իբր անպատեհ զոլ առժամն պահել զնա առ իւր՝ զն մի և ինքն ապստամբակից նմա թուեցի՝ արձակեաց զնա զնալ նստել անկասկած 'ի Վանուփա. և ապա զրեալ 'ի ծածուկ առ փոխանորդ իւր, որ 'ի քաղաքի անդ, ետ բառնալ զճերուհին 'ի կենաց, և զզուրխ նորա առաքեաց 'ի Աստանդնուպօլիս, որով և յաւել իւր փառն, և շնորհս առաջի Տէրութեանն գտեալ՝ հասոյց զորս կամեցան՝ յաստիճանս պատուոյ: Իսկ 'ի զօրաց Թօքաթաթըքընայ կէք սպանան անդէն 'ի Ռուսջուզ հրամանաւ Թիրսնիքընայ, և այլք՝ անկան յայլ և այլ տեղիս՝ մաղապօր 'ի մահուանէ:

Թուի թէ յայնժամ Մանուկ ոչ էր 'ի քաղաքին. ապա թէ ոչ՝ օրինակ զայս չ'զործէին իբրն. քանզի այր արդարասէր և ուղղախոհ զօրով նորա՝ կամ բնաւ ամենեկին թոյլ չապր Թիրսնիքընայ խոստանալ ապստամբող առնն և զլնապարտի զպաշտպանութիւն, և կամ յետ խոստմանն զօրն դործէր եւ ինչ դասնել իրացն: Մակայն զհարդ և է սպանումն կամ կենդանւոյն 'ի ձեռս գալ այսոցիկ աւազակաց և այլոց ընդ ժամանակս ժամանակս. ընդ նմին և իշխանական ասհրնից աստակութիւնն՝ Թիրսնիքընայ՝ որ շուրջ ընդ ամենայն տեղիս առ բաժնեալ էր, սպառ բովանդակ անհետ արարին զմարտորդաւ յիւրզակութիւնն յամենայն զիւրաբայց և յաւանաց, ևս և յաւէտ 'ի լեռնագնաց ճանապարհացն՝ որ յառաջագոյն առհասարակ դարանք և զարարք էին աւազակաց: Եւ այնչափ յապահովութիւն եղև յամենայն տեղիս, մինչ զն ցամա բազումն լսել չեղև աւազակութեան իրիք փոքու պատահել ուրիք:

Թէպէտ և յայս չափ պատուոյ և ամբութեան հասեալ էր իշխանութիւնն Թիրսնիքընայ, բայց Մանուկայ յայնի լեալ յօրվագրուին ինչ փորձիւ՝ եթէ յՕսմանեան պետութեանն ոչ աներկեան 'ի

վտանգէ կան ստացուածք ընչեց, խորհէր յայլ ուրիք զամենայն զհարստութիւն իւր ապահովել 'ի պէտս չարաբազդ ժամանակի: Եւ զն Վալաքիա՝ որպէս և Մորտավիա համասէր ըստ իմիք (թէ և ընդ իշխանութեամբ այնր Տէրութեան) ընդ արտաքին մարզս՝ ինքնուրոյն օրինօք կառավարեալ. և զն հաստատագոյն ևս էին անդանօր առանձնական կալուածք երկրի, և չթուէր՝ թէ ներքոյ անկցի բազմազմի վրդովմանց և յաճախադէպ աղետոյ՝ որ ծագին յապստամբողացն բռնութենէ, սկսաւ անդր անցուցանել հետ զհետէ զգրաման՝ զորս շահախն էր՝ առ 'ի գնելոյ նովմիք զգետին 'ի կալուած: Եւ զն իրաւունս ունիցի առ այն ըստ գաւառին օրինաց՝ ընկալաւ 'ի Պէյէ նորին յամին 1802, զպաշտօնն Սէրֆալքս՝ անուանեալ, որ աղնուականութիւն իմն համարէր յերկրորդում՝ կարգի:

Պ. Բ.

Իբրև անցին ամիսք ինչ յետ հասանելոյ Մանուկայ 'ի պաշտօնն՝ զոր վերագոյնդ յիշեցաք, հարկ եղև նմա զնալ 'ի Շիշթով, և անտի 'ի Վանուփա՝ յայց և 'ի զննումն բերոց աշնայնոց և 'ի կարգաւորել զբաշն զանձնիւր հարկաց և սակից բնակչացն: Իսկ 'ի ժամանել յամբոկ գործոյն՝ զէպք ոչ 'ի բարի պատահեցին նմա: Զն այն ինչ կայր 'ի կոչունս ուրիք բարեկամացն՝ ապաժոյժ յորդ ընդ անդունսն բերեալ յօգուտ ժամն՝ նուաղեցոյց զնա. և արկ վերնօքն դալուկն մահատիպ: Պապիկ՝ հաւատարիմ նորա՝ որ անդն դասնէր յայնժամ, տեսեալ եթէ չ'զօրն ինչ զեղորոյք յարգելու զհոսումն արեանն՝ առ տարաւ զնա 'ի տուն, և անդ Մանուկ յետ սաղնապիլոյ 'ի խօթութեան զամիսս երիս հաղիւ ուրեմն դարձաւ յառօղջութիւն:

Եր յայնժամ Թիրսնիքըն 'ի սահմանն Վրոնուփայ, և նստէր 'ի գեօզ մի տարակաց 'ի քաղաքէն երկօտասան ժամուց ճանապարհաւ. և զէպ եղև նմա անդ տարապարս ցամամբ տալ վճիւս սպանման չյանցուցելոյ ումնն: Զայս իբրև լուս Մանուկ, լի ամենայն ճէպով չողաւ եհաս առ Թիրսնիքըն՝ Պապիկաւ հանդերձ: Տիրապէս կամք էին նորա արգելու զանպարս սպանութիւնն. բայց նախ զգնալոյն պատճառս յայլ ինչ բողբուղեալ՝ «Իկի, ասէ, հրաման առնուլ ճանապարհորդելոյ 'ի վանս ուրիք յաշխարհին չայոց՝ որում մէք սուրբ Արարպետ անուն ասմք՝ զն 'ի ժամանակէ հիւանդութեանս ուխտաղիր եմ զնալ անդր». և ապա զերծուցեալ զգատակնքեալն 'ի մահ՝ մեկնեցաւ անտի երթալ վերստին 'ի Վանուփա:

Յուզեցնացութեանս յայսմիկ այլ ինչ ևս արկած չարմբերագոյն պատահեաց նմա յանակնկալս. որով ՚ի ճահ գայ մեզ զչափ առնուլ զամենազգաստ տեսութեան մտաց նորա և զհանապազազոյշ արթնութեանն ՚ի ձախողակս անգամ. ուստի և անյիշատակ զերսն թողուլ ոչ է արժան:

Իբրև մերձ եղև Մանուկ ՚ի շէնն Վայա-Փունար բացագոյն ՚ի Ղուկուկայ գնացիւք իբրև չորից ժամուց, զբացեալ ինքնին՝ թերևս ՚ի պտուտից գլխոյն՝ եթէ իւր ցնդի ուշ, հան իսկոյն ՚ի զբայանաց հանդերձին զինիք իւր և ընկեց ՚ի թփուտս՝ առ որով անցանէրն: Եւ յայն սակա թուի արարեալ զայս՝ զի մի գուցէ ստիք իւր յանկանիլ իւր ՚ի խելաց՝ ՚ի ձուս զինիքն բերեալ խելս ինչ խառնեացն խարդախել զինքն յանիրաւ պահանջանս պարտուց, և քանզի այս օրէն էր ՚ի ժամանակին առ Օսմանեանս բազում ուրիք ՚ի վկայագիրս, և ՚ի մուրհակս անգամ ՚ի տեղի անուանն ստորագրութեան կնքով և եթ մասնէհարել:

Յետ վայրիկ մի ևս անցանկոյ ձեռն արկ Մանուկ ՚ի զէն՝ կամելով իմն անձին առնել. յորմէ իմացեալ Պապիկայ՝ եթէ աղմկին զնա ցնորք, փութացաւ անկաւ զանջօքն արգելուլ զհարուածն մահացու: Եւ այն ինչ երկոքին ևս բուռն ՚ի վէգ զային ափափել կորզել ՚ի միմեանց զզէնան՝ կրակեալ արձակեցաւ ընդ մէջ նոցա ատրճանն, այլ չնկատեաց և ոչ միումն: Իջեալ ապա Մանուկայ յերկարէն (զի երկոքին ևս հեծեալք էին), մխցաւ ՚ի թաւութան. ուր փոքր միւս ևս՝ եթէ չէր երագեալ զհետ նորա Պապիկ՝ ջրահեղձ զանձն առնէր նա ՚ի գեան Եանթրայ՝ որ ընդ այն հոսէր: Եւ քանզի կամէր ոչ նա մերկ ՚ի զինուց անդրէն ՚ի ձի վերելանել, եթաց Պապիկ գողաբար զձախոյկս ատրճանացն՝ զորս խնդրէր նա առնուլ զանձամբ, և այնպիսաբար երբ հասոյց զնա առժանաւոր կրիւք ՚ի Ղուկուկա:

Ոչ է ասելի քանի մեծ էր արամութիւնն թիրսնիքլեայ՝ յորժամ ընկալաւ նա ՚ի Պապիկայ զբոթ չարաբաղդ զիպուածոյն: Եւսքեաց կոչեաց զամենայն զգէտս և զմոզս իւրոյ զինին՝ զներհմուտան (որպէս համբաւէին) յարուեստի ախտափարատ յուռթից և բժժանաց. և առեալ ևս զերկուս ոմանս ՚ի բժշկաց՝ նոքօք հանդերձ չոքաւ ՚ի Ղուկուկա՝ ձարագիւս լինել խթացիւց բարեկամին:

Իբրև ամենայնիւ ՚ի գերև ել ճիզն նոցա, լաւ համարեցան առաքել զՄանուկ ՚ի Պուքրեշա, ուր ձարաարագոյնք ՚ի բժշկաց էին: Եյլ անդ ևս զարման ինչ չղտաւ նմա. զի բժիշկք պնորքն խելագարանաց նորա, պատճառեալ ՚ի յաճախութենէ

ճգանց ՚ի գործս տաժանաւորս, ապստամբ յամենայն հնարից համարեցան. և ոչինչ այլ, ասէին, պիտի նմա, բայց յերկարագոյն ինչ ուղեգնացութիւն առ ՚ի ծծել զշուռն զառողջաբեր օդոց:

Ընդ լսել զայս թիրսնիքլեայ՝ նոյն ընդ նոյն հրամայեաց ուխտագնաց լինել Մանուկայ ՚ի վանս սրբոյ Արարպետի առանց՝ այլ ևս անապանկոյ: Եւստ զնա Պապիկ, և երկոքին ՚ի միասին հատեալ անցեալ զժուարութեամբ ընդ բազմօրեայ ճանապարհ՝ հասին յափն մեծի գետոյն Եփրատայ՝ որ չէ ինչ հեռի ՚ի մենաստանէ Սրբոյ Արարպետի: Եւ այն ինչ ՚ի տեղուջ ուրիք ընդ կարաւանին զկայ առին ՚ի հանգուցանել զերկվարսն, անդուստ ահա այր մի խելաշուրջ հեծեալ ՚ի ցուպ եղեգնեայ՝ ձիավարեալ վազէր գայր անցանէր զառաջեաւ նոցա մերկ խայտառակ անձածկոյթ յամօթոյս: Եւստ զնա Մանուկ, և պիշ զակն ՚ի նա յառեալ հարուստ մի՝ ասէ ցՊապիկ մանր իմն ընդ քիմն ժպտելով. «Եհէ, ոչ և սա իսկ իմ ընկեր իցէ». և զողջես իմն անձին զբացեալ ամօթահարութեամբ ընդ խելայիզ ապշութիւնն՝ նկրաէր ինքնին ամփոփել զուշ իւր. որով և թուէր իմն՝ թէ տակաւ տակաւ յինքն գայցէ. բայց և ընդ պահս պահս բարխրեալ զառանցէր: Ի հասանել ապա ՚ի վանսն՝ առաւելովքն զգօնացաւ. ուր և նորա առաջին հարցումնն ցՊապիկ եղև զիւրոց տուժարացն և զհաշուէ գրոց. և ՚ի լսելն՝ եթէ ինքնին զայնոսիկ կնքեալ ծրարափակ յանձնեալ է իւրում աներոյ, ուրախ եղև յոյժ: Եւ աւեցին այս ցնորք նորա զրիթէ զամ մի ողջոյն:

Յետ կալոյ ՚ի վանս անդ զաւուրս հինգ, կլին դարձեալ ՚ի ձանապարհ գնալ ՚ի Ղոստանդուպօլիս: Եւ զի հեռավայր այն ուխտագնացութիւն թուէր իմն Մանուկայ իբրև ՚ի մոռաց անկեալ զայս նուագ ՚ի դարձին հանդարտիկ արար նա զերթն կամելով յաւէա զբօսնուլ ՚ի զնին աշխարհացն՝ ընդ որս անցանէրն: Եւ աւուրք էին յայնժամ ամարայնոյ:

Հիացեալ էր ընդ զուարճատեսիլ վայելութիւն աշխարհին Հայոց, ընդ քաղցրախառնութիւն օդոյն և ընդ քաջաբեր արգասաւորութիւն կողմանցն այնոցիկ՝ ուր հոսեալ ընթանան մեծամեծ գետք փոքուն Եսիոյ: Բայց քան զամենայն զովիլ զովէր զերկիրն Տարոնոյ՝ յամենայն նուագս՝ յորժամ յուշ ածէր զձանապարհօրգութիւն իւր անդր, վկայեալ՝ թէ չէր իւր տեսեալ ուրիք ընդ երկնաւ տեղի ինչ նմին համեմատ. և ՚ի վախճան զովութեանցն յաւելոյր և ասել. «Երդարացեալ է ուրեմն իմաստութիւնն Եստուծոյ՝ ՚ի նմա զՂարախան անկելով զերկրաւոր, և զնոյն արժանապէս զառաւ

ջինն տուեալ ազգի մարդկան 'ի բնակութիւն":
Իսկ զմենաստանէն պատմէր ոչ այնչափ հոյակապ
'ի շինուածան գոլ՝ որչափ գեղեցիկ յերևոյթան 'ի
բայէ՝ հրաշալի զնիսան ունելով 'ի սարաբարձը
վայրի:

Իցէ թերևս ոմանց տարապայման իմն զգովու-
թիւն տեղեացս համարել. այլ ոչ և ինձ բանիցս
կարգողի, որ կարով երբեմն 'ի վանս անդ, և շրջեալ
զառուրս ոչ սակաւ ընդ պարագայ վայրսն՝ պարա-
րեցայ անյագ 'ի նոցին հեշտալի բարութեանց վա-
յիւ: Երկրք հովտայինք ինքնազարդք ամենբանգ

ճաղկօք՝ յորոց 'ի համաճաւալ բուրմանց անու-
շահոտանան վայրք ամենայն. անտառք սաղարթա-
զուարճ մայրեաց՝ հովաշունչք 'ի սօթի. բիւրա-
կնեայ վտակք ինքնախաղաց յորդաբուխ ջրոց՝
վիժեալք յօռոզումն անդաստանաց և պարտիզաց,
այս ամենայն առատապարզե բարիք ամենարար
Չեռին 'ի միում անդ յանձուկ երկրի, արդարե
իր և 'ի բնագիծ նկարու յանդիման առնեն զըս-
քանչեք իմն տեսարան գեղեցկահրաշ՝ յափշտակիչ
մասց մարդկան:

(Շարունակեսցի)

ԻՆՉ Է ՄԵՐ ՅԱՆՅԱՆՔ

(ՋԱՏԱԳՈՎՈՒԹԻՒՆ)

Ի՞նչ է մեր յանցանք, սէր իմ Արմենայ,
Որ մեք չեմք տեսել ժրպիտ քոյ բնաւին:
Եթէ անընդհատ քոյ դիւին վերայ
Պատուհասք հազար կըտեղան ոյժգին,
Նոքա վանելու, դու գիտես սակայն,
Որքան անվհատ, անգուլ կ'ընեմք ջանք:
Եթէ վաղ ընդ փոյթ չեն լսեր մեր ձայն,
Ի՞նչ է մեր յանցանք:

Ընդգէմ թշնամուցն մեր կրօնքն ու հող,
Փորձ ըրինք պահել դարերէ 'ի դար.
Նա աիրեց քեզի աալով ահ ու դող,
Քանզ աւեր ըրաւ ըզբեղ չարաչար:
Եթէ դիւցազունքն անձնուրաց ու ժիր,
Որք մատաղ տուին իւրեանց անգին կեանք,
Չըկրցան փոխել քոյին ճակտի գիր,
Ի՞նչ է մեր յանցանք:

Ասին. »'ի կորուստ թող լինի այդ ցեղ.
»Օրէնք, իրաւունք մեր կա՞մքն է և սուր:
»Ի՞նչպէս, երբ մերին անունն է հեղեղ,
»Կարէ գէմ դընել այդ մի կաթիլ ջուր":
Իսկ մեք հալածեալ, յաշտարհս ցիր ու ցան,
Բազում փորձանաց անվնաս անցանք:
Եթէ մերթ յիմարք անունդ ուրացան,
Ի՞նչ է մեր յանցանք:

Ոչխարք անհովիւ, քաղցեալ երամակ,
Գայցինք արածիլ յարօան օտարին.
Միշտ ակնկալու որ դայ ժամանակ
Հայրենի փարախն դառնալու կրկին:
Բայց պակասեցաւ մեր հօտն օր աւուր:
Եթէ մեր մէջէն միամիտք ոմանք,
Կեղծաւոր գայլոց եղան կերակուր,
Ի՞նչ է մեր յանցանք:

Ժամ է որ նորէն դու գերթ մի արև,
Որպէս և երբեմն փայլես կենսատու.
Որ նըսեմանայ մահիկն քոյ առջև,
Մարդկութեան պարծանք և ջահ լինիս դու:
Եթէ չեն զգար շտապն ու կարօտ
Անտերունջ մանկան, և նորա ըղձանք
Գառնալու անդրէն իւր մայրիկին մօտ,
Ի՞նչ է մեր յանցանք:

Մի սգար այլ ևս: Գազանն անբարիշտ,
— Երբ գրկանցըզ մէջ վաղու առնումք դարձ —,
Պիտի տեսնէ թէ մնացել եմք միշտ
Արժանի որդիքն մեր սուրբ նախահարց:
Յայնժամ դու ազատ, հըլզօր, անբաժան,
Մերթ մոռանալով քոյ ամեն տանջանք,
Պիտի դոչես մեզ ձայնովդ աղուական,
»Չունէիր յանցանք":

Յունուար 1881.

Տէրան - Աշոտ:

ԱՐՇԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՏԵՐ-ՂՈՒԿԱՍԵԱՆԻ

Դ Ա Գ Ա Ղ Ի Վ Ե Ր Ա Յ:

Օրհնութիւն անմահ քո յիշատակին,
Եւ խաղաղութիւն քո ոսկերքներին.
Հանդիւր խաղաղ և քո վեհ անունը,
Կը յաւերժանայ Հայու սրտումը:

Գնան բարեաւ, հանգիստ, ո՞վ ազնիւ հերոս,
Քո քաջութիւններ պարծանք Հայերուս.
Երթ դու համարձակ և Հայ դիւցազանց,
Շարքումն ընդունիր պսակ պարծանաց:

9 Յունուար 1881.

Արմենակ - Սէնի:

ԱՐՇԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՏԵՐ-ՂՈՒԿԱՍԵԱՆՅ

Ներսէս ամի Յունուարի 11-ին համարեալ թէ ամբողջ Տփլիսը ժողովուած էր Վանքի բա- կում և նորա դրացի փողոցներում: Այս տեղ էին՝ Նորին Բարձրութիւնն Արշակունի փոխար- քայն իւր որդւոյ հետ, Տփլիսու ամբողջ գէնէրա- լիտէարը, Վրաստանի Ազգարիւր և միւս քրիստո- նեայ և մասնաւորապէս դաւանութեանց ներկայացու- ցիչները: Վրացի տանց յարկերը, պատշաճութիւնը, լուսամտանները՝ մէկ խօսքով՝ ուր որ միայն կարելի էր նստել կամ կանգնել, լիքն էին աղքատ և հա- լուստ, բարձր և ստոր դասուց անհասներով:

Ինչ էր ժողովել այս ամբողջ այս տեղ. վերջին Ռուս-թուրքաց պատե- լազմի առաջին հերոսի՝ Արշակ Յարութիւնեան Տեր-Ղուկասեանցի թաղ- ման հանդէսը կատար- վում էր Մայր եկեղեցւոյ մէջ: Որովհետև հանգու- ցեալն, իւր բեղնաւոր կե- նաց ընթացքում, մեծա- մեծ և նշանաւոր ծառա- յութիւններ էր մատու- ցել՝ թէ ուսու և թէ իւր բնիկ Հայոց ազգին, մա- նաւանդ վերջին Ռուս- թուրքական պատերազ- մում, ուստի ուսու մա- մուլն, մի քանի օր ան- ընդհատ, բազմաթիւ և ջերմ, համակրական յօ- ղուածներ նուիրեց նորա յիշատակին: Մի կողմ

թողնելով մեր խորին յարգանքն դէպ ՚ի Տեր-Ղու- կասեանի պատկառելի անձնաւորութիւնը, մենք համեստութենից զրգուած, կ'հրաժարվինք երկար գովեստներից, որոնք, գուցէ, մեկնրվին իբրև հայի սնափառ ազգասիրութեան արգասիք և կ'հաղոր- զենք ընթերցողին միայն այն, ինչ որ քաղում ենք Ռուս լրագրներից:

Ահա, զորօրինակ, որպիսի անկեղծ սիրով խօ- սում է Պ. Օ. Գիսսերման Տեր-Ղուկասեանի առթիւ *Новое Время* անուն լրագրում:

Մահը կրկին մի նոր զոհ յափշտակեց հին Ար- կացիների միջից, ասում է նա. Յունուարի 8 ին, թիֆլիզում, վախճանեցաւ Արշակունի երկրորդ

զօրաբաժնի հրամանատար՝ Ղուկասեանի Արշակ Յարութիւնեան Տեր-Ղուկասեանցն:

Յիսուսներոյ թուականների սկզբներում, մենք միասին էինք ծառայում մի վաշտի (brigade) մէջ, ոչ սակաւ արշաւանքներ կատարեցինք Վաղարշա- նում և այն ժամանակից սկսեալ, անդադար քաղցր բարեկամ մնացինք հանգուցելու հետ: Նա այն- պիսի իսկ անձն էր, որի հետ մտրդս մի անգամ ծանօթանալիս, չէր կարող ընդ միշտ և անկեղ- ծօրէն չպատկառիլ նորա առաջն: Ղուկասեանը ազատ բնաւորութեան տէր, ասպետական վեհանձնու-

թեամբ, անշահասէր, միշտ հանդարտ ու անխռով, խստիւ պահանջող պա- շտօնական պարտակա- նութեանց կատարումն, սակայն, առանց ՚ի զուր տեղ յանդիմանելու և բարձրաձայն սպառնալու, հանգուցեալն իւր մաս- նաւոր կեանքում, զբաւիչ զրուցող էր, բարեսրտու- թեամբ լսում ու ժպտում էր, երբ պատմում էին նորան զանազան ծիծա- ղաշարժ դէպքեր և առակ- ներ: Այս բան կարգա- ցած, յարգող Ֆրան- սիայի էնցիկլօպիդիստնե- լին և մանաւանդ Ղ. Օլ- տէրին, որ իւր հետ ման էր ածում արշաւանքների միջոցին, հարուստ պէս- պէս գիտութեանց պա-



ԶՕՐԱՊԵՏ ԱՐՇԱԿ ՏԵՐ-ՂՈՒԿԱՍԵԱՆՅ
 Վախճ. ՚ի 8 Յունվ. 1881.
 ГЕНЕРАЛЪ АРШАКЪ ТЕРЪ-ГУКАСОВЪ. GENERALE ARCHAK TER-GOUKASSOFF.
 (Պատկերս նկարեցաւ և փորագրեցաւ յատուկ մեր հանդիսի համար)

շարով, նա երբէք չէր ձգտում, իրան շրջապատող սպանների մեծագոյն մասի առաջ ցոյց տալ իւր ուսումնականութեան գերազանցութիւնը, այլ ընդ հակառակն, աշխատում էր նուրբ կերպով ներգաշնակութիւն պահպանել այս, եթէ ոչ այն- քան զարգացած, գոնէ բարեկիրթ և քաջ զինակից ընկերների հետ: Ամուրի ծերունին, որ իւր նիւթա- կան պիտոյից մէջ, գիտէր փոքրով շատանալ, չէ կարելի ասել, որ Սպարապետ նման դժնդակ կեանք վարէր. նա ապրում էր, առհասարակ, իբրև սպայ, և ուրախութեամբ ընդունում էր իւր հիւրին, առաջարկելով նորան, այն ինչ որ Աստուած է ուղարկել: Ի 1837 թուականին աւարտելով իւր

ուսումն մի բարձրաստիճան ճեմարանում, որ ուսուսիրէն կոչվում է Институтъ Путьей Сообщенія, Տէր-Ղուկասեանց մի քանի ժամանակ ծառայեց Ս. Պետրբուրգում, իսկ յետոյ անդափովիցաւ դէպ 'ի Վովկաս բայց, պէտք է ստել, որ ինժեներական պաշտօնը նա չհաւանեցաւ, վասնզի դորա մէջ չէր գտնում բաւարարութիւն իւր միակ ցանկութեան, այն է փառասիրութեան: Մայիօրի աստիճանով նա ծառայութեան մտաւ Ապշեռոսեան հեռեակ զօրաց մէջ, ուր նորան յանձնեցին մի բատալիօնի հրամանատարութիւնը մինչև 1858 թուականը, դորանից յետոյ, ըստ առաջարկութեան հանգուցեալ Բարոն Ե. Ե. Վ. Ղանգէլի, որ շատ յարգում էր Տէր-Ղուկասեանին, վերջնա ընդհանուր հրամանատար դարձաւ Ապշեռոսեան գնդին, որի մի բատալիօնով նա մտաւ այն զօրաց շարքը, որոնք պաշարել էին Վուկիբն: Արժանայիշատակ Օգոստոսի 25 ին, 1859 թուականին Ապշեռոսեան գնդի որսորդները (յօժարակամ զինւորները) և նոցա հետ Արշակն (ինչպէս մենք սովոր էինք բարեկամաբար կոչելու հանգուցեալին), մի բատալիօնով, առաջինն էին, որ բարձրացան Վուկիբի գլուխը, շուտափոյթ անցանելով մի ճեղքի միջով, որ յորդ անձրևներից կայացել էր ապառաժի վերայ, սպանեցին բոլոր լեռնական պահապաններին, և այսպէս գլխաւոր հարուածը հասուցին Շամիլի վերջին ապաստանին: (Միևնոյն ժամանակ միւս կողմից, Ապշեռոսցիներից զատ յարձակվեցան Վ. րաց զրէնատերներն իշխան Տարխանովի առաջնորդութեամբ և ապա, Վաղստանցիք իւրեանց հրամանատար Ռատեցկիու հետ): Վուկիբի նուաձման համար Տէր-Ղուկասեանը և Ռատեցկին ստացան Սրբոյն Վէրդի շքանշանի Վ-դ աստիճանը: Վեներալ-Մայիօր դառնալուց յետոյ, նա բրիգատայի գլուխ եղաւ, մի փոքր ժամանակ էլ գաւառապետ էր Միջին Վաղստանում: Իսկ երբ ստացաւ 38-դ զիվիզեայի հրամանատարութիւնը, այն միջոցին ծագեցաւ Ռուս-թուրքական 1877 — 1878 թուականների պատերազմն: Պետ նշանակվելով Արևանեան առանձին գնդին, որի գրութիւնը, ուրիշ զօրաց բացակայութեան առթիւ շատ ծանր և գրեթէ անյուսալի էր, նա զարմանալի ճարտարութեամբ յաղթեց անակնկալ խոչնդոսներին. Օչ. վինի պարտութիւնից զինի նորա յետ նահանջվելը մի քանի հազար զաղթականներով, մեծ քանակութեամբ վերաւորեալ հիւանդ զինւորներով հանդերձ, երբ անհնարին էր լրացնել գնդի անհրաժեշտագոյն պիտոյքները, առանց թողնելու թշնամու ձեռքին յաղթական որևիցէ նշաններ, նորա ազատելը 3000 հազար Հայ ընտանիք, Պա-

յազիտի դիւցազնական պաշտպաններին, միով բանիւ նորա բոլոր գործողութիւնները մինչև Վէվէբոյնուի մարտը, նաև Արզուուի առումն, ակներև փաստերով վկայեցին, որ Արշակ Յ. Տէր-Ղուկասեանցն առաջնատաւոր զօրավար է, որ ամենայն տեսակ պատերազմում և պէսպէս թշնամեաց դէմ յաջողութեամբ կարող է մարտախիւ անկախ և զատ զօրաբաժնի գլուխ անցած: Ասիական Տաճկաստանում տեղի ունեցած վերջին պատերազմի պատմութիւնը, անտարակայս, մանրամասնօրէն կպատմէ և կգնահատէ Արևանեան գնդի գործողութիւնը և ըստ արժանւոյն կվարձատրէ նորա հռչակաւոր հրամանատարի վաստակներն:

Բացի ուրիշ պարգևներից, վերոյիշեալ գործոց փոխարէն, հանգուցեալն ստացաւ Ս. Վէրդի շքանշանի Վ-դ աստիճանը, և գերմանացուց կայսրից «pour le mérite» օրդէնը վզի վերայ կրելու. նա շատ գոհ էր այս երկու պարգևներից, ինչպէս ինքն ասում էր, իւր վերջին անգամ Պետրբուրգ եկած ժամանակ՝ 1879 թուականի դարնանը:

Պատերազմից յետոյ քանի մի ամիս զրէնատերների տիվիզեայի առաջնորդութիւնը վարելուց յետոյ, Արշակ Յարութիւնեան պաշտօնական հանգամանաց և հիւանդութեան պատճառով, արձակուրդ խնդրեց: Ամառն 1879 թուականի անցուց նա Պետրբուրգում և երբ պատրաստ էր արդէն արտասահման ճանապարհորդելու, յանկարծ հեռագրով հրաման ստացաւ վերադառնալ 'ի Տիֆլիս, ուր Վեներալ-Ասիւտանա Յովհաննէս Ազարեանի անակնկալ մահուան առթիւ, Վովկասեան Փոխարքայի հրաւիրեց նորան գնալ իսկոյն Չիկիշեար, և իւր վերայ ընդունել Ախալ-Թէքէ օվազիզեց յետ դարձած զօրաց հրամանատարութիւնը: Օչնելով մեր այն տեղի բռնած բոլոր կետերը, քաջ վերահասու լինելով իրերի դրութեան, Տէր-Ղուկասեանցն մանրամասն հաշուով դարձաւ կրկին 'ի Տիֆլիս, խնդրելով միևնոյն ժամանակ, որ արձակեն նորան հիւանդութեան պատճառով, Անդրկասպեան զօրաց հրամանատարութիւնից: 'Սա այլ ևս չվերադարձաւ այնտեղ, և նշանակվեցաւ կովկասեան երկրորդ զօրաբաժնի հրամանատար, հանգուցեալ Վեներալ Ազարեանի տեղն:

Վերջին ժամանակներս Արշակ Յարութիւնեան ցաւ էր զգում աչքերում և միշտ իւր նամակների մէջ՝ գանգատում էր տկարութեան և մի անմեկնելի ու անախորժ հոգեկան դրութեան վերայ առ հասարակ....

Այնու ամենայնիւ չպէտք է անակնկալ համարել նորա մահն, թէև 'ի նկատի առնելով նորա հասակն (նա 62 ամաց էր), և դեռ ամուր կազմուցքն

կարելի էր սպասել նորանկից աւելի երկար կեանք: Արկնում եմ, վերջացնում է իւր խօսքը պ. Օխտակուման, Արվիասեան զօրքն զրկվեցաւ այժմ իւր ամենաերեւելի և առաքինի Ղեկերալների մինից. նորա, որոնք անձամբ ճանաչում էին նորան, ասարակոյս չկայ, որ անկեղծ արամութեամբ լսեցին գեղեցիկ մարդու և աէրութեան հաւատարիմ ծառայի վաղաժամանակ մահուան գոյժն:

Թէ որչափ հասարակ զինւորներն սիրում ու հաւատ էին ընծայում գեներալ Տէր-Ղուկասեանի ընդունակութեանն և ուղղմական ճարտարութեան, երևում է Շ. -Петербургскія Вѣдомостѣ, անուն 1878 թուականի, թղթակցի հետևեալ խօսքերից. «Наши солдатики говорятъ, что мы съ генералами Теръ-Гукасовымъ да съ Денибеговымъ и на черта пойдемъ».

Ահա երջանկայիշատակ Արշակ Տէր-Ղուկասեանի գործունէութիւնը օտարների կարծիքով:

Որպէս Հայ, կարող չենք չոխել հանգուցելոյ մի

ազգասիրական գործը՝ որ գուցէ շատերին յայանի չէ: Արք Բագուայ «Մարդասիրական Ընկերութիւնը» զեւ երջանկայիշատակ բժիշկ Ռոստոմեանցի թղթերումն էր՝ Արշակ Յարութիւնեան իւր անաս նուիրաբերութեամբն, մինչև 5000 ու անաջինն եղաւ, որ հիմն դրաւ այդ ընկերութեան: Թող հանգուցելոյ ուրիշ գործերն և նուիրաբերութիւններն, որք շատերին զեւ յայանի չեն: Ապագայ նորա կենաց պատմին անտարակոյս կը ժողովի այդ ազգասիրական բարի գործերը և այդպիսով աւելի կփառաւորէ նորա արդէն փառաւոր անունը:

Արջացնելով մեր յօդուածը կարող չենք ՚ի միտ չեկրել յայանի երզի խօսքերը.

«Թող պատերազմում, կռիւի դաշտում,
«Մեր հայրենիքի փրկութեան համար,
«Սուրբ քո ձեռին, փառաւոր մահով,
«Թող դու գահէիր քո արիւն արդար»:

Խ. Յ.

Դ Ա Ի Ի Թ Տ Ե Ն Ի Ե Ր

ԴՕստէլ գերզի հիւրանոցներից մէկի մէջ մի սեղանի առաջ նստած է մի աղամարդ և վերջացնում է իւր համեղ նախաճաշիկը: Հասնում է նախաճաշիկի փողը վճարելու ըստէն. մինչդեռ հիւրանոցի տէրն տեսնում է իւր հաշիւը, այցելուն սկսում է քրքրիլ իւր գրպանները: Ահա քեզ բան, ոչ մի կօպէկ չ'կայ մօտս, բացազանչում է նա: Ասելով այդ անխորժ խոստովանութիւնը՝ պանտօկապեան մի անբաւական դէմք է շինում, և, դառնալով դէպի հիւրն, ասում է նորան. «Պարոն, առաջ քան թէ ձեր այստեղ գալը, ձեզ հարկաւոր էր տեղեկանալ՝ արդեօք փող ունիք թէ ոչ:— Այդ ճշմարիտ է, պատասխանեց հիւրն, բայց հանգստացէք. ես ունիմ մի բան, որով կարողեմ իմ պարտքս վճարել: Այս ասելով նա վերկացաւ իւր տեղից և գնաց դէպի դուռը. այդ միջոցին ներս մտաւ մի անգղիացի ճանապարհորդ, որ նոյնպէս եկել էր այստեղ ճաշելու համար:

— Այ՛, սի՛ կայ այդտեղ, գոչեց նա. շուտով ինձ մի նախաճաշ տուէք:

Պանդօկապեան շատպով և մեծ եռանդով սպասաւորում էր նորեկ հիւրին, որից նա յոյս ունէր աւելի շատ արծաթ ստանալ՝ քան թէ առաջին հիւրից. միևնոյն ժամանակ նա յաճախակի երկիւղալից հայեացքներ էր ձգում վերջնի վերայ, երկիւղ կրելով մի գուցէ հեռանայ նա առանց մի կօպէկ վճարելու: Սակայն նորա երկիւղը ընդունայն էր:

Առաջին այցելուն կանգ առաւ շեմքի վերայ և մի առանձին ուշադրութեամբ սկսեց քննել հայեացքով բակի մէջ գտնուած առարկաները:

Հիւրանոցի ղէմուղէմը մի մեծաստուեր ծառի տակ կար մի նստարան, որի վերայ նստած էր մի աղքատ ծերունի և մեծ աշխոյժով ածում էր իւր սաղի վերայ: Անգղիացին, որ արդէն իւր նախաճաշ մեծ մասը կերել էր, զլուել էր այդ միտոստակ և ձանձրացուցիչ եղանակը լսելով, ուստի դառնալով հիւրանոցի տիրոջ՝ ասաց նորան. «Խնդրեմ քեզէք այդ անիծեալ աղքատին, որ իմ ականջներս բոլորովին խլացրեց: Այդ լսելով առաջին այցելուն, որ դեռ չէր վճարել նախաճաշիկի փողը, դարձաւ դէպի անգղիացին և մեծ քաղաքավարութեամբ զլուխ տալով նորան ասաց. ես ձեզ մեծապէս խնդրում եմ, որ մի փոքր էլ համբերէք. այդ աղքատ երաժշտի գլուխը սքանչելի է, իսկ նորա ցնցոտ պատանոտեալ հանդերձն շատ գեղեցիկ առարկայ է նկարչութեան համար, մանաւանդ՝ որ նա բոլորովին անշարժ է, և ինձ թուում է որ նա ընդունակ է մինչև միւս տարի մնալ այդպէս հանգիստ նստած: Պա շատ լաւ կենդանագիր է, որի շնորհիւ ես միջոց կունենամ իմ կերած նախաճաշիս հաշիւը վերջացնել:— Մի՛ թէ դուք ուրիշ միջոց չ'ունիք ձեր պարտքը վճարելու, հարցրեց անգղիացին արհամարհանքով:— Ոչ, բացի դորանից ուրիշ միջոց չ'ունիմ: Տիրեց մի խոր լուութիւն: Անգղիացին՝



ԱՄՍԵՐԴԱՄ ՔԱՂԱՔ ՀՈՒԼԱՆՆԵՐԻՈՅ
--ը կային խանութները -- Հայոց եկեղեցի և Հայոց գրգռանը:
AMSTERDAM.



ՀՈՒՇԱՅ Ի ՍԱՄԱՐԿԱՆԴ:
 БАЗАРЪ ВЪ САМАРКАНДѢ.

դարձներով իւր երեսը նորանից շարունակեց իւր նախաձաշիկը, իսկ նկարիչը սկսեց իւր գործը: Չարմանալի ճարտարութեամբ սկսեց նա նկարել ծերունի աղքատի պատկերը՝ որ շարունակում էր իւր ածիլը աւելի մեծ եռանդով սչինչ չ'նկատելով՝ թէ ի՛նչ է լինում իւր չորս կողմը: Նկարիչը զարմանալի արագութեամբ կատարում էր իւր գործը և արդէն վերջացնելու վերայ էր:

Անգղիացին, որ յառաջագոյն մի կողմնակի հասցեաց էր ձգել նորա նկարի վերայ, այժմ՝ վեր կացաւ իւր տեղից և զգուշութեամբ աննկատելի մօտեցաւ նորան:

Մի ամբողջ քառորդ ժամ նա հիանում էր նայելով այդ նկարի վերայ: Բայց խորամանկ նկարիչը կարծես թէ չէր նկատում՝ որ իւր յեռուում երկու հոգի, անգղիացին և պանդոկատուր, կանգնած են և հիանում են պատկերի վերայ: Նա վերջացնելով նկարը, ասաց դառնալով հիւրանոցի տիրոջ. ես կարծեմ որ սա վատ չէ, և պիտի արժէ իմ սիրելի պարոնիս նախաձաշին: Պանդոկատուր զմայլած չէր կարողանում մի խօսք անգամ ասել. նա այնպէս լաւ էր հասկացել իւր օգուտը՝ որ իսկոյն ազատութեամբ մեկնեց իւր ձեռքերը դէպի պատկերը: Բայց անգղիացին անհամբերութեամբ բռնելով նորա ձեռքից, ասաց նորան. անպիտան, և մի՞թէ քո խղճմանսը կ'տանի այդ պատկերների պարագրուիւր առնել նախաձաշի փոխարէն: Ուրեմն իմացիր՝ որ ես լորդ Ֆալտոնն եմ, և արգելում եմ քեզ այդ:

— Բայց միւրոյ.....

Լաւ կաց, այս պատկերը կ'ուղարկուի Լօնդոն, եթէ միայն հեղինակը տայ իւր յօժարութիւնը:


Նա ուրախութեամբ, բացագանչեց նկարիչը, երբէք սովորութիւն չ'ունիմ մի մեկենասի խնդիրը մերժել: Աթէ այդպէս է առէք այս փողիւրը, ասաց անգղիացին թափելով սեղանի վերայ մի բուռն ոսկի, և առնելով պատկերը պատրաստվում էր արդէն հեռանալ: Խնդրեմ մի բոսէ համբերէք, միւրոյ ասաց նորան նկարիչն, ես զեռ ևս իմ անունս չեմ ստորագրել պատկերի տակ:— Ձեր տաղանտը արդէն հաւասարաչափ է ձեր ստորագրութեանը, պատուելի պարոն, ես այս պատկերին նայելով իմանում եմ Վաւիթ Տենիերի հոչակաւոր անունը,

ասաց լորդ Ֆալտոնը և հեռացաւ: Պանդոկատուր քարացել էր զարմացքից:— Այո, ճշմարիտ է, որ ես Վաւիթ Տենիերն եմ և զիտեմ որ ամենայն տեղ խօսակցութեան առարկայ եմ դարձել, և յոյս ունիմ որ այսուհետեւ աւելի ևս շատ կ'խօսեն: Իսկ այժմ խնդրեմ կանչեցէք այն ծերունի աղքատին, որ այդ նկարած նիւթիս զըլխաւոր պատճառ դարձաւ, և պատրաստեցէք նորա համար մի լաւ նախաձաշ և լաւ զինի, որ նա իմէ Վաւիթ Տենիերի կենացը:

Տուն վերադառնալով մեր նկարիչը



զարմացաւ երբ տեսաւ իւր մօտ Աւստրիացոց Վոն Դուանի, Հոլլանտայի ափրապետողի ծառայներից մէկին, որ հրաւիրում էր նորան գնալ պալատ, և խնդրում էր առնել իւր հետ իւր բոլոր պատրաստ պատկերները: Ճշմարիտ է ասում առաձը, ասաց Վաւիթ Տենիերը, որ բարի գործն երբէք անվարձ չէ մնում: Այն նախաձաշը, որ ես պատրաստել տուի ծերուկի համար, բերում է ինձ հարստութիւն:



Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ՕՐԱԳՐԱԿԱՆ ՅՕԴՈՒԱԹՔ

„Новооткрытое армянское pendant, къ посланию Публія Лентула въ Римскій Сенатъ объ Исусѣ Христѣ“ (Православное обозрѣніе 1880 г.)

Հանդիսիս նախընթաց տեսարակաց միոյն մէջ խոստացանք աւելի ընդարձակ խօսել Պ. Լամինի 'ի վերոյ նշանակեալ ռուս լիզուով զրուած յօղուածի վերայ: Աստարում ենք մեր խօստումը:

Պ. Լամինին առիթ տուաւ զրեւը այդ յօղուածը մի հին ձեռագիր երկասիրութիւն հայերէն լիզուաւ, որ ուղարկուեցաւ նորան Պարսկաստանի Ռաշտ քաղաքից: Այդ երկասիրութիւնը, ինչպէս պատմում է Պ. Լամին, զրուած է Հնդկաստանի Լահոր քաղաքում 'ի 1030 թուականին Հայոց կամ 'ի 1581 թուականին Քրիստոսի, այն է սորանից 300 տարի առաջ, 'ի Յովհաննէս քահանայէ, այն իսկ ժամանակ, երբ Աֆղանցիք, որք սպրտամբութիւն էին անում Պարսկաստանի մէջ, զբաւնում էին զիւր Սպահանում և նորա ճուղաւ անուանեալ արուարձանում: Չեռագիրս զրուած է 12 ծալ թիւրթի վերայ և յԵ-յԵՂ դարերի նսար զրով, բաց 'ի ուրիշ երկու նորա մէջ գտնուած յօղուածներէից:

Չեռագրիս զխաւոր նիւթն է Յակոբայ Արիմեցոյ աստեղաբաշխութեան մեկնութիւնն և յայտնի հայ մատեմատիկոսի՝ Մաննիայի Էրեւակացոյ՝ Օրացոյցն: Պ. Լամին խօսում է զխաւորապէս Յակոբայ Արիմեցոյ երկասիրութեան վերայ և նորա առեւած պատմական նկարագրութեան վերայ մեր Փրկչի մասին, և որ համեմատելով այդ նկարագրութիւնը Պուրբիոս Ալեքսանդրի Հոփմեանի Սինատին տուած անդեկութեան հետ նոյնպէս Փրկչի մասին, նա թարգմանորէն բերում է իւր յօղուածին մէջ:

Պ. Լամին թոյլ տուաւ մեզ ընդօրինակել այդ հատուած բանը Յակոբայ Արիմեցոյ բուն ձեռագրի միջէն, որ և բերում ենք այս տեղ նոյնութեամբ:

„Օրնչ ասացից զերկրորդն Ազամայ՝ զտեսան մերոյ Յիսուսի քրիստոսի զգեղեցկութիւնն, որոյ ծնողն էր Աստուածածին, և որդին Աստուած էր և կուսածին, և նիւթ մարմնոյն էր արին կուսին մաքրեալ Հոգւովն աստուածային: Քանզի յորժամ քարոզէր 'ի ժողովրդանոցին Տէրն մեր Յիսուս քրիստոս՝ հայեցեցեալ կնոջն նրբահայեաց տեսութեամբ 'ի գեղ երեսայն և 'ի ձե հասակին քրիստոսի՝ և անհարմանայր: Քանզի հայեցաւ 'ի մազ գլխոյն քրիստոսի՝ նա գանգրահեր էր 'ի ճակատն՝ նա իբրև զլիս արևուէր 'ի յիւնքն՝ նա իբրև զերկնային կամար էր 'ի յաչքն՝ նա իբրև զծով էր 'ի յականջն՝ նա իբրև զբլթակ քնարից ականջաց իբրև զքնար լուսատեսիլ ամպոյ էր 'ի յունկունս՝ նա իբրև զծոյլս ոսկւոյ էր 'ի յայտքն աստուածային երեսացն՝ նա իբրև զհասնտան էր 'ի շրթունսն՝ նա իբրև զլար կարմիր էր 'ի բերանն՝ նա իբրև զակն արևու էր, որ զլոյս բանիցն բղկէ: 'ի յատամունքն՝ նա իբրև զլար մարգարտաց էր 'ի լեզունն՝ նա սուր էր և սուվար, բանքն էր քաղցր և ազդարար, համեղ ու ճարտար 'ի հետ շրթանցն՝ նա իբրև զլալամի քաշուած էր 'ի գոյն ձորուայն՝ նա իբրև զթեյս ոսկւոյ շեկագոյն հարէր 'ի պարանոցն՝ նա իբրև զսին ամպոյ էր 'ի լանջքն՝ նա իբրև զծոյս բոցափայլ արեգական էր 'ի ձգումն ձեռացն որ քարոզէր՝ նա իբրև զցովունս նշուլից լուսոյ էր 'ի յանձին վայելչութիւն՝ նա ցանկալի էր



ՀԻՊԱՏՈՍԻ ՌՈՒՍԻՆՅ՝ Ի ՎԱՆ ԿԱՍՏԱՐԱԿԱՆՍԻ:
РОССИЙСКИЙ КОНСУЛЬ ВЪ ВАНѢ КАМСАРАКАНѢ. CONSUL RUSSE A VANE KAMSARAKANE.
(Պատկերս նկարեցաւ և փորագրեցաւ յատուկ մեր հանդիսի համար)

տեսին իբրև զտիպս զմրուխ, տեսյ ականց և իբրև զգունագեղ ականց քարանց պատուականաց: Վասն որոյ ոչ կարաց ժուժել անհամեմատ վայելչութեան և չքնագեղ զեղեցկութեանց՝ 'ի բաց մերկացաւ զկանացի ամօթխածութիւնն 'ի մեծ բազմաբանին, գոչեաց և գոռաց հառաչալիք արտասուօք և բարձաձայնեալ արձակեր զձիչ մղձկեալ սրտին և ստեր՝ ո՛հ ո՛հ ո՛հ, երանի՜ որովայնին որ կրեայն զքեզ, երանի՜ բարձանոյն որ եբարձ զքեզ և բազկին որ ամբառնայր զքեզ, երանի՜ շրթանցն որ համբուրեցին զքեզ և լեզուին որ զովէրն և զգուէրն զքեզ, զի 'ի վեր է քան զքնութիւն գեղեցկութիւնդ քո:

„Ահա տես, զի թէ աստուածային չափակցութիւն չափուց մասանց անգամոցն այնքան զեղեցկութիւն էր, որ զստմայուցանէր հոգեբարձութեամբ զտեսողսն“:

Հայ մատենագրաց այսպիսի անդեկութիւնք, որք կարելի է ասել ռուս զրականութեան մէջ բնաւ յայտնի չեն, և եթէ յայտնի ևս են, այն ևս յոյժ սակաւ, ինչպէս երևում է զբաւումն են ռուս հասարակութեան կամ լաւ ևս ասել նոցա հոգեւորական զասի ուշադրութիւնը:

ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ՏԱՐԵԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ. Պոլս. Փետր. 1881 թ.

«Այն է անագան քան ոչ հրբէք»: Այս է հանդիսից նշանաբանը և այսպիսի յաջող հանգամանաց մէջ նորա 'ի լոյս գալն միանգամայն ևս յայտ կառնու մեզ՝ թէ ոչքան ճշմարիտ է այդ առածն: Պէտք է ուրեմն 'ի միա բերեմք զայն առանց վհատութեան ամեն անգամ, որ պարտիմք խօսիլ Հայկական խնդրոյն առած ծանրընթաց քայլերուն վերայ: Յոռիախուժիւնն իւր յետին սահմանն հասուցանել է կարծելով այս միջոցին այն խնդիրն թողուած կամ գոնէ անսահման կերպով յետաձգուած:

Վման այն պարզեւաբաշխական արարողութեան, որ մեր մտաց մէջ այնքան քաղցր և յուզիչ տպաւորութիւն թողած է մեր դպրոցական ժամանակին վերայ, կարծես եւրոպական ուղիարհութիւնն հեռահեռ է և ըստ արժանեաց վճռած է տալ մի կարգ դեռահասակ ազգերու այն մրցանակն, որով արժանի դատած է պատկիլ և մեր անուէն իսկ արժանեաց ցանկին մէջ գանուիլն և եթ սփոփիչ եղելութիւն մի է և այն անուան յետադոյնն լինելն պէտք չէ յուսահատեցնէ զմեզ:

Սեբ' որ աշխարհավարական բարձր գիտութեան մէջ կիրթ չեմք ըստ բաւականի, ներեալ կը լինի մեզ անշուշտ կարծիլ՝ թէ պաշտպան Տէրութիւնք իւրեանց կարողութիւնէն վեր գտանելով զուգնթաց կերպով լուծելն երեք խնդիր 'ի միասին, նախապատիւ կը համարին վերջ տալ կանխապէս այն դժուարութեանց, որք անմիջական կերպով իւրեանց անդորրութիւնն կ'սպառնան, և յակամայս կը պարտաւորին յետաձգել 'ի նոցանէ ոչ միայն պարզագոյնն, այլև ամենէն իրաւացին: Ահա այս պատճառաւ, քանի որ ստիպուած եմք մեր կարգին սպասելուն, բնական պէտք է երևի Հայոցս անհամբեր փափաքն, որ Հիլինական խնդիրն ընդ փոյթ լուծուին գոնէ. քանզի նորա վերջաւորութիւնն մեր արդարագոյն և համեստ պահանջմանց կատարմանն սկիզբն պիտի լինի:

Ըսայժմ գուտաբանակ Հայն, որ կը շարունակէ նսթակայ լինել աւանդական կեղքմանց, պէտք չէ մտանայ հրբէք որ քիչ ժամանակէն մի նոր և լաւագոյն կացութիւն կը պատրաստուի նմա: Բայց մինչև այն անխուսափելի վայրկեանն, հարստահարութիւններու զէմ ինքնապաշտպանութեան անժխտելի

իրաւունքն հարկ է որ ընդունի նա իբրև մի փրկարար սկզբունք: Նոքա որք առիթ ունին խօսելու գաւառացիին հետ, քարոզել պէտք են նորա՝ թէ իւր ակնկալքն այս կերպով միայն կարեն իրականանալ՝ թէ իւր կողմանէ կրաւորական մի զիրք մասամբ իւրք ապարդիւն կրնէ Կ. Պոլսոյ Հայոց ծիգերն և Կովկասեան ազգայնոց այն ազգեցիկ օժանդակութիւնն, զոր պատրաստ են նուիրելու ամեն անգամ՝ որ հարկն պահանջէ:

Հայոց երկու զխաւոր մասերն՝ որք 'ի Ռուսիայ և 'ի Թուրքիայ կը բնակին, մինչև ցայժմ չէին զգացած՝ թէ միմեանց գրեթէ օտար ապրիլն նրբան ազգային ընդհանուր յաւաքագիմութեան արգելք եղած է. զի սորա մի ոյժղին մղում տալու համար գոնէ բարոյական միութիւնն անհրաժեշտ էր: Արկուստէք հեռատես անձանց այն ջանքերն իսկ, որով զմեզ անջատեալ պահել ուզեցին, պէտք էին յիշեցունել մեզ՝ թէ այդ յարաբերութիւնն օգտակար է: Ազգին շահաւոր ինչ հանգամանք և ինչ յատկութիւն որ կը պահուէր միայն, կարող էր միւսն լրացնել, և փոխադարձաբար: Բայց ժամանակն ուշ չէ: Արդէն ուստիաբնակ Հայոց 'ի սկզբան ունեցած լոկ հետաքրքրութիւնն, թուրքիաբնակ Հայոց գործերու նկատմամբ, մտահոգութեան փոխուած է այժմ: Աս ոչ ևս անտարբեր է սահմանէն անդին կատարուած իրողութեանց և հրատապ անձկանօք փափաքող է տեսնել անդորրութեան և արդարութեան անց երևան գալն: Իսկ թուրքիաբնակ Հայն, հուսկ ուրեմն ճանաչելով՝ թէ ինչ թանկազին յատկութեանց աէր են իւր ազգակիցներն 'ի ուստիական գաւառս, կը գնահատէ յոյժ այն տեղի երիտասարդաց ազգասիրական եռանդն և մեծ բարութիւնք կ'ակնկալէ այն պատուական փաղանդէն: Այս ձգտումն, որոյ արտադրութեանն համար պարագայներն իսկ օգնեցին, ջանալու է առաւել ևս զօրացնել՝ հաստատելով մտաւոր և անընդհատ յարաբերութիւններ. քանզի բարիք և աղէտք այսուհեաւ հաւասարապէս ազգու են ազգին, առանց հպատակութեան տարբերութեան: Ազգային օրադրութիւնն ոչ սակաւ կարէ նպաստել այս մասին, եթէ երբէք իւր նուիրական պաշտօնին արժանի լինելն կամի ցոյց տալ:

Այսպիսի փափուկ պարագայից մէջ, ուր ժողո-

վուրդին ուշադրութիւնն իւր վերակենդանութեանն օգտակար խնդրոց վերայ և եթ զբաւեալ պէտք էր մնալ՝ ցաւ 'ի սիրտ կը տեսնեմք՝ որ Արիւնիոյ Ս. Աթոռիկոսին Ա. Պօլսոյ մէջ գտնուելուն առթիւ, ոմանք դարուս ոգւոյն անյարմար խնդիրներ կը յարուցանեն, երկու Աթոռիկոսաց կրօնական յարաբերութիւններն ճշդելու նպատակաւ: Մինչդեռ ժողովուրդն իւր «Լինելոյն կամ ոչ լինելոյն» վճիռն անձկանօք կ'սպասէ, Սոյ Աթոռիկոսին վեղարի գոյնն և ստորագրութեան ձէն բանակցութեանց նիւթ կը լինին: Միթէ այս խնդիրներն անխոհեմաբար երեւան հանողներն չը մտածեցի՞ն երբէք որ մեր ազգն նոցա մի կրօնական կերպարան տալու ընդունակ է տակաւին, չ'ըմբռնելով՝ որ նոքա անմիջական մի յարաբերութիւն չունին իւր կրօնքին հիմանցն հետ: Ի՞նչպէս ազգն վայրագար յուզելու երկիւղն չը կասեցոյց զայնս, և Սոյ Ս. Աթոռիկոսն ևս մի ծառայութիւն չէր մատուցանէր արդեօք իւր սիրելի ազգին՝ եթէ իւր ճանապարհորդութիւնն ձգէր աւելի պատեհ ժամանակի: Եթէ երկու կամ երեք Աթոռիկոսական աթոռոց գոյութիւնն անկանոն մի բան է, լաւագոյն չէր միթէ, որ պահ մի ևս մոռանայինք զայն, մինչդեռ բազում դարերէ 'ի վեր այդ հակառակ աթոռներն ազգին կենսական շահուց զգալի մի փնտս չեն կարողացեր բերել: Ահեղեցական դասն թող այսպիսի խնդիրներն վեճաբանէ երկարօրէն և մի որոշում տայ, եթէ կարող է, բայց այն օրն միայն ուր խղճի մտօք կը տեսնէ, որ ազգն նոցա կարգադրութեանն միայն կը կարօտի, կատարեալ և երջանիկ մի ազգ լինելոյ համար:

Բայց եթէ, ինչպէս կը կարծեն ոմանք թերևս իրաւամբ, Արիւնիոյ Ս. Աթոռիկոսին ճանապարհորդութիւնն աշխարհաւարական ազդեցութեանց զրգմամբն է, որպէս զի ազգին վարչական կշռոյն մէջ նորա նժարն ծանրանայ առաւել և Հայոց մեծամասնութեան 'ի հոգեօրի հակումն շեղելով՝ քաղաքական մի շահ գոյանայ անտի, այն ամեն քան զայս առաւել խոհեմութեամբ և զգուշութեամբ հարկ էր անօրինել ինչ՝ որ ներկայ պարագայից մէջ օգտակարագոյնն է ազգին ընդհանրութեան:

Փութամբ սակայն ուրախութեամբ յաւելցնել՝ որ ժողովուրդն յուսացեալէն աւելի լըջօրէն կը վարուի այս պարագայիս մէջ և, բաց 'ի մի քանի

անձերէ, Հայ հասարակութեան այս խնդրոյն տուած կարևորութեան աստիճանն գրեթէ անտարբերութեան կը մօտենայ:

Ազգային յառաջադիմութեան նպատող ընկրութիւններն 'ի թուրքիայ կը յարատեն իւրեանց ընթացից մէջ որքան որ երկրին տազնապալեց վեճակն կը ներէ: Արեք ընկերութեանց միացումն ոմանք պակաս արդիւնաւոր կը տեսնեն քան երեքին առանձնակի գործած ժամանակն: Բայց հարկ է մտածել՝ որ երեք ընկերութեանց ուրոյն ուրոյն հաւաքած հասոյթից գումարն եթէ այժմեան հաւաքուածէն աւելի էր, սակայն անհնարին էր նոյն արդիւնքն գոյացնել միշտ, վասն զի ոչ մին 'ի նոցանէ կարող էր պահել այն եռանդն և ոչ իսկ ստանալ այն համարումն՝ որ ունին այժմ «Միացեալ Ընկերութիւնքն»: Աւ դարձեալ՝ ըստ որում միւսնոյն հասարակութեան կը զիմէին այդ երեք ընկերութիւններն զրամական օգնութեանն համար, մեծ փտանդ կար որ 'ի վերջէ և յսկամայն միմեանց ճիզն մասամբ ոչնչացնէին, յորմէ հասոյթից նուազումն կարէր գոյանալ բնականապէս, ծախքերն նոյն մնալով: Աւրեմն Հայաստանի զպրոցներն այս միութեանէն ինչ որ կորուսին առժամանակեայ կերպով քանակութեան մասին, տեղութեանէն շահեցան: Բայց «Միացեալ Ընկերութեանց» հասոյթին նուազումն իսկ չէ կարող շնչանջնաւոր լինիլ, նախ՝ ժողովրդեան անցուկ վեճակն, հաճելի է մեզ ըսել, վայրկենական լինելուն, և երկրորդ որ «Միացեալ Ընկերութիւնքն» մի լաւ միջոց ձեռք առած է այժմ ստակի հաւաքման մասին, այն է թաղական մասնախումբներու հաստատումն, որով ամեն անհատ ըստ իւր կարողութեան կարենալով այսուհետեւ վճարել այդ նուիրական տուրքն, ընկերութիւնքն պիտի օգտին մեծապէս: Ար յաւելումք նաև որ փափաքելի էր տեսնել «Միացեալ Ընկերութիւնքն», մի աններելի համեստութեամբ, ոչ այսքան ժլատ գտնուելն իւրեանց տեղեկութեանց մասին: Այն ամեն զլխաւոր քաղաքաց ազգայինք, որք կը նպաստեն նիւթապէս այդ ձեռնարկութեան, չըսեմք իրաւունք ունին, այլ հաճոյք կ'զգան յոյժ տեսնելով ստէպ ստէպ ընկերութեան բարոյական հաշիւն և կրկնախումբն առաւելագոյնն օժանդակելու համար:



ՄԱՅ ԱՂԵՔԱՆԴՐ Բ. ԿԱՅՍԵՐ ԱՄԵՆԱՑՆ ՌՈՒՍԱՅ:

ՊՈՍԵՓՈՒ Աղեքսանդր Բ. կայսեր ամենայն Ռուսաց մահուան գոյժը շանթահար կայծակի նման սարածուեցաւ բոլոր երկրազնդիս վերայ:

Ներքին գործերի նախարար՝ կոմս Միքայէլ Լոբու-Մելիքեանցը այսպիսի հեռագրով յայտնեց այդ անակնկալ և զարհուրելի գոյժը Ռուսաստանի ժողովրդոց. «Այսօր, Մարտի 1 ին, ժամը 1^{3/4}՝ երբ Թագաւոր կայսրը վերադառնում էր զինախազուց, Ախատարինեան ջրանցքի եզրում, Միքայէլեան պալատի պարտիզի մօտ, կատարուեցաւ Նորին Մեծութիւնը սպանելու փորձ երկու ճայթող ուումբերի միջոցով. նոցանից առաջինն վնասեց Նորին Մեծութեան կառքը, իսկ երկրորդի ճայթումը պատճառեց Թագաւորին ծանր վէրքեր: Չմեռնային պալատը վերադառնալուց յետոյ Նորին Մեծութիւնը արժանացաւ ընդունել սուրբ հաղորդութիւն և յետ այնորիկ ՚ի Տէր հանգեաւ ժամը 3 ից 35 րոպէ անցած՝ կէսօրից յետոյ: Չարագործներից մէկը կալանաւորուած է»:

Կատարուեցաւ անլսելի և սարսափելի դիպուած. Ռուսիոյ Թագաւորը՝ Նա որ միլիոնաւոր ազգեր աղատեց, ընկնում է նահատակ չարագործների մի խմբի: Մի քանի անձինք, որոնք ոչ այլ ինչ են եթէ ոչ ծնունդք խաւարի և խռովութեան, յանդգնեցան իւրեանց պիղծ ձեռքերով վտարանջել Ռուսաստանի նման ընդարձակ տէրութեան դարաւոր աւանդութեան դէմ, արասաւորել նորա պատմութիւնը, նորա դրօշակը, որ ինքն Ռուսաց Թագաւորն է:

Աղեքսանդր Բ. կայսեր Թագաւորութիւնը լի է Աստուածային Տեսչութեան հրաշալի յայտնութիւններով. Նորա ամբողջ կեանքը մի շարք է քրիստոնէական համբերութեան և բարեսրտութեան: Աղեքսանդր Բ. իրաւամբ կարող է համարուել տասնեկններորդ դարու երևելի յեղափոխիչներից մէկը. Նորա 20 միլիոն ստրուկների սպառութիւն պարգեւելը, Նորա դատաստանական բարեկորդութիւնները ամենին քաջ յայտնի են: Ինչո՞ւ համար ուրեմն ազգի թշնամիները յամառապէս հետամուտ էին լինում սպանել նորան. նորա համար որ Նա չէր դադարում իւր բարեգործութիւններով բաղդաւորացնել Ռուսաց ազգը, նորա համար որ Նա փառաւորեց և զօրացրեց իւր պետութիւնը, նորա համար որ Նա կենդանացրեց իւր ազգի ոգին, վերջապէս նորա համար որ Նա հաստատ քայլերով առաջ էր գնում իւր ազգի պիտոյքները հոգալու ասպարիզով:

Աղեքսանդրութիւնը յաջողուեցաւ, բայց ի՞նչ եղաւ դորա հետեանքը. տէրութեան անկումը թէ ինքնակալութեան խախտումը: Ո՛չ, երբէք Ռուսաց ինքնակալութիւնը այնպէս զօրաւոր, այնպէս հիմնաւոր և հաստատ չէ եղել, ինչպէս է այժմ՝ այն եղեռնագործութիւնից յետոյ, որ աւելի անխղիչ կապերով միացրեց Ռուսաց ազգը իւր Ինքնակալ Թագաւորի հետ:

Թագաւոր-Ազատիչը՝ Նա որ նուիրել էր իւր անձնը իւր հպատակների զրութիւնը բարեօրէնը գործին, 1881 ամի Մարտի 1 ին պսակեց իւր երկրաւոր պանծալի կեանքը նահատակի մահուամբ: Ռուսաստանի և Ռուսաց ժողովրդեան թշնամիները եօթնակի փորձերից յետոյ հասան վերջապէս իւրեանց հրէշաւոր նպատակին: Ճշմարիտ Ռուսը երբէք մոռանալու չէ որ հանգուցեալ Թագաւորի վերջին միտքը և մասամբ զուցէ մահուան պատճառն եղել է Նորա հոգսը իւրեան շրջապատող այն անձինքների մասին, որոնք առաջին ճայթումից յետոյ վերաւորուած ընկած էին գետնի վերայ: Այդ հոգան էր հանգուցեալ Թագաւորի վերջին գործը: Այդ վերջին գործը կարելի է համարել արժանաւոր պսակ Նորա բոլոր կեանքում կատարած մի ամբողջ շարք բարեգործութիւնների, որոնցով նա փառաւորեց իւր անունը: Բոլոր Ռուսաստանը անպատիւ եղաւ Մարտի 1 ին այնպէս ինչպէս անպատուում է մի ընտանիք որի անդամներից մէկը պախարակել է նորա անբիծ անունը: Այդ անպատիւ բիծը կարող է մաքրուած համարուիլ միայն այն ժամանակ, երբ Ռուսաց ազգային ոգին նշմարելի վերակենդանութիւն ստանայ, երբ ժողովրդեան բոլոր դասակարգերը հասկանալով իւրեանց պարտաճանաչութիւնը դէպի հայրենիքը, անխղիչ կապերով կ'միանան իւրեանց Թագաւորազն Առաջնորդի հետ:

Նահատակ Թագաւորի թաղման փառաւոր հանդէսը, որին ներկայ գտնուեցան Ռուսիոյ բոլոր անկիւններից հաւաքուած երեսփոխանները ևս և այլազգի տէրութիւնների իշխանները, կատարուեցաւ Մարտի 15 ին: Մոսկուայի՝ որպէս Հայ հասարակութիւնը, նոյնպէս և Ղազարեան Ճեմարանը արժանացան զնել Օգոստոսփառ հանգուցելու դազաղի վերայ արծաթեայ տափնեայ պսակներ, որոց վերջինս ունէր այսպիսի վերնագիր. «Великому Царю Освободителю, Александру II, отъ Лазаревскаго Института Восточныхъ языковъ». Իսկ առաջինն՝ «Великому Покровителю армянской церкви, Царю-Освободителю, Александру II-му»:



ԼՈՒՍԱՐԱՐԻ ՆԱՍԱԿՆԵՐՆ Ի Կ. ՊՕԼՍՈՑ

Կ. Պօլսոս 5 Փետրվարի 1881 թի:

Վարձը թաց նամակովս խոստացած էի գրել ձեզ Ազգային Ընկերութիւններու վրայ, որք՝ փառք երիտասարդութեան՝ թուով նուազ չեն Արաճածու դաւաններէն, երկնի աստղերէն, ծովեզրի աւազներէն և... երեսփոխանին ըստ որոմսներէն: Այս Ընկերութիւններուն վրայ շատ շատ խօսելու առաջադրելու անոնց և ոչ միայն վրայ խօսել է, շատ խօսել է, բայց բնաւ չխօսել է կ'ազաչեմ, երեսփոխաններ, մի՛ վերաւորվէք, խօսքս ձեզի չակնարկեր: Եթէ ոչ լաւ՝ գոնէ մարդու պէս խօսելու համար քիչ խօսելու է, ինչպէս նաև մարդու պէս ապրելու համար քիչ ապրելու է: Երջանկութիւնը սակաւութեան մէջ է: Արդ, զիսաւոր քանի մը Ընկերութիւններու վրայ համառօտի խօսելու համար սկսինք նախ Միացեալ Ընկերութիւնէն, որ այսօր խիստ բարձր աեղ մը գրաւած է թէ Հայաստանի մէջ և թէ Ղալաթիա Յակոբ Էֆէնտիի խանին մէջ: Արարատ աշխարհ գիտէ, որ Միացեալ Ընկերութիւնն ունենալով մի բնութիւն և երեք անձինք՝ Այրարատեան, Գարուցասիրացի-Արեւելեան և Արեւելեան, նպատակ ունի Հայաստանի մէջ լոյս տարածելու: այս նպատակին հասնելու համար էր անշուշտ, որ վեց ամիս առաջ «Լոյս» հանդիսին խմբագրութիւնն և անօրէնութիւնն ստանցնելու որոշում պաշտօնաւ և յետոյ զըջացաւ...: Այս Ընկերութիւնն վերջերս պաշտօնական յայտարարութիւն մը հրատարակելով կը ծանուցանէ՝ որ եթէ ազգայինները չբաժանուին զինք՝ պիտի ստիպուի քանի մը դպրոցներ փակել, որպէս զի կարող լինի իւր ծախքին դուրսն հասցնելու դուրսին հետ հաւատարակչուէ: Ինչո՞ւ հասցնելու գումարն աւելցնելու փոյթ չը տանիր: Վասն զի մեր ժողովուրդն աղքատ է, աղէտ է... Ինչո՞ւ ժողովուրդեան աղքատութիւնն և ազիտութիւնն նկատողութեան չառաւ նախ, և եթէ ժողովուրդի տգէտ և աղքատ չը լինէր՝ ի՞նչ պէտք ունէր այսչափ կրթական Ընկերութիւններուն: Իսեղծ ազգէ՛ որ անհասանելու մեղքը քաւելու և յանիրաւի հայրածակու ենթարկված է: յանիրաւի ըսի, վասն զի իրաւունք չունինք, կրտս չը գիտեմ ով, մեղադրել կոյրն՝ թէ ինչո՞ւ չտեսներ, խաչն՝ թէ ինչո՞ւ չստեր: այս ազգն, կրտսմ, իւր կարողութեանը չափով օգնեց այդ երեք Ընկերութիւններուն՝ որոց իւրաքանչեան կարող կը լինէր այսօր երեք չորս կանոնաւոր վարժարաններու դոյուլութիւնն հաստատուն եկամուտներով ապահոված ըլլալ և հետզհետէ անոնց թիւն աւելցնել եթէ երկու փամբ անգամ մը զպրոց բանալով լրագիրներու մէջ փառաւորվելու փառասիրութիւնն չունենար: Ինչո՞ւ այդպէս չվարուեցաւ: ասոր պատասխանը տուած է մէկն ըսելով՝ «Յատրոնի մը մէջ առջե թերան կարծահասակ գերասաններ ընդունելու չէ, վասն զի անոնք պիտի աշխատին իրենցմէ աւելի կարծահասակ գերասաններ բերելու»: Այդ Ընկերութիւններուն գործադիր ժողովներուն մէջ բարձրահասակ անդամներ կային, գործերը բացասական պատասխան կուտան: Այսօր Միացեալ Ընկերութեան գործերը վարողն բարձրահասակ է, ապագայն թող պատասխանէ: Անցնինք Արեւսփոխանից Ընկերութեան, որ հաստատ քայլերով ընթանալ կը թուի և որ լրագիրներու գրասենեակներուն մէջ չանցուններ օրերն իր վրայ դոյուլներ հրատարակել տալու համար: Ունինք նաև, ինչպէս գիտէք, Գարուցասիր-Հայոսեանց և Արեւսփոխանից-Հայոսեանց Ընկերութիւններ, որք գեղեցիկ սեռն դաստիարակելու գեղեցիկ պաշտօնն ունին: Ասոնք ևս լրագիրներու մէջ մեծ ազմուկ կը հանեն և աս կասկած կուտայ ինձ՝ թէ գործէն աւելի խօսք ունին: այսու ամենայնիւ ամեն օր մոմ կը վառեմ և կազօթեմ Աստուծոյ, որ կասկածս սխալ ըլլայ: Ի՞նչ ընեմ, միտիարութիւն մը պէտք է: Ի՞նչ ըսեմ ես այդ սրամիտ և կատակասեր Շահնուբէն, որ «Ազգանուէր-Հայուհեաց» Ընկերութեան ատենապետուհոյն քրթաւ նամակին վրայ գնդասեղի ծայրովն դպաւ: Մեծ վէճք մը բացաւ գրաբառին վրայ՝ որ լալով և ողբալով գնաց գեղեցիկ սեռին գիրին ինկաւ: Շահնուբին

գնդասեղին ծայրով մեծ հարուած մ'եղաւ քանի մը գրագէտներուն: Աստուածներուն և աստուածուհիներուն մէջ վէճ ծագեցաւ, Անահիտ, Արամազդ, Գիմետրէ, Հերմէս, վերջապէս Լոյսի Ընկերութեան բոլոր շոգենաններն մասնակցեցան այս կուռոյն: Աստուածուհիներն, որ պաշտպանողական դիրք մը բռնելու էին, աշխարհաբարձն վրայ յարձակեցան: աստուածներն մէկ քանին գրաբառին վրայ յարձակեցան և Շահնուբէն մէկ կողմ՝ քաջված սխաւ քահնաճայն խնդալ տեսնելով իւր գործած խնձորին արտադրած կատակերգութիւնը: Աշխարհաբարձ, կրտսն, կոյր է, կաղ է, սպաւտող է, տգէղ է, աղքատ է, իսկ քրթաւն՝ հարուստ է, գեղեցիկ է: Բայց ով ըսաւ իրենց՝ թէ մեռեալներուն մէջ հարուստ և գեղեցիկ չ'գտնուիր, և թէ իրենց խօսքերն պահ մ'ընդունելով, սպաւտող՝ տգէղ և աղքատ չ'գտնուիր: Իսնդիրն մահու և կենաց խնդիր է, ինչպէս կրտսն մեր խմբագիրներն ամեն խնդիրներու համար: Մին մեռած է և միւսը կենդանի: Ոչ, կրտսն աստուածուհիներն, մեռեալ չէ, այլ կը ննջէ: Սխալ է, կը պօռան աստուածներն, ննջեցեալ չէ, այլ մեռեալ է: Կնջեցեալն արթնցնինք, կը պօռան աստուածուհիներն: Այդ գործը դժուար է, կը պատասխանեն ննջեցեալն արթնցնելու աշխատելու տեղ՝ կենդանին ճոխացնելը և գեղեցիկացնելը: Եւ երբ կը տեսնեմ՝ որ թշնամիներն առանց գիտնալու հաշտուած են իրարու հետ՝ քահնաճ մ'ալ ես կը վերցունեմ և կը հարցունեմ վիճաբանող աստուածներուն և աստուածուհիներուն՝ ո՞ր է Մոմսը: Իսնդալու բաներ շատ ունինք, փառք Աստուծոյ, բայց լալու բաներ ալ կան: օրինակի համար՝ կրօնական գործոց խորհրդականն իւր պաշտօնէն հրաժարեցաւ և մեծ դաւ պատճառեց ազգին (երկու շաբաթ է՝ որ ես ալ հանգիստ քուն քնացած չեմ): ամեն գիշեր երազես մէջ կը տեսնեմ յիշեալ կրօնարար մեթիսթոֆէի կերպարանը՝ կրօնարարներն այսպէս կը ներկայանան եղբ երազներու մէջ): աղաչեցին զինքն՝ որ ետ առնու հրաժարականն, բայց հրաժարեալն ոչ թէ միայն ետ չառաւ զայն, այլ հատ մ'ալ տուաւ երեսփոխանութիւնէն հրաժարելով: Ես կը վախնամ, որ եթէ այս հրաժարականն ալ չընդունվի՝ վաղը եպիսկոպոսութիւնէ ալ պիտի հրաժարի: Վարչութիւնը չ'գիտեմ թէ ինչո՞ւ համար ուրիշ մը չ'բերաւ և անոր չ'յանձնեց այս պաշտօնը: քանի որ փնտաւածք արժանիք չէ այլ մարդ՝ հրաժարեալին նման բաւական եպիսկոպոսներ ունինք այսօր: Եպիսկոպոս մը վարկ չէ՝ որ դժուարութեամբ գտնուի կամ բնաւ չ'գտնուի: Վարչութիւնն չ'փնտաւեր այն բաներն՝ որ գիւրաւ կը գտնուին, այլ խնդրելու կենն անանկ բաներ, որ դժուարաւ կը արուին: Ազգային ժողովն ամսական երեք հազար դուրուշի յաւելում մը կը խնդրէր պաշտօնեայներուն ծախքին համար, և մինչև այսօր կրօնական խորհրդական մը չ'բերէր: ստակ չկայ՝ որ գործեմ, կրտս՝ մինչդեռ ստակի բնաւ պէտք չ'կայ կրօնական խորհրդական մը գտնելու համար: Արդեօք Վարչութիւնն չափազանց տգէտ, այսինքն և ի՞ գ չը գիտող կրօնաւոր մը կը փնտաւէ, որ չ'կրնար գտնել...:

Վար լուր մ'ալ: Վարդան զօրավարն և Գավաթեան զրաւաճառն բանտարկվեցան: Վարդան զօրավարն ծախվելու յանցանքի համար և Գավաթեանը զայն ծախելուն համար: Պատր. Փոխանորդն իմացուց Բ. Գրան՝ թէ Սուրբերը բանտարկելն աղէկ տպաւորութիւն չըներ ժողովուրդեան վրայ: Ես կը կասկածիմ, որ Բ. Գրան վաղը միւս օր Առաքեալներն ալ պիտի բանտարկէ: Լեոն Լուսինեանի պատկերներն ալ բանտարկուած են: Փառք կուտամ Աստուծոյ՝ որ անունս ոչ Վարդան է և ոչ Լեոն, վասն զի հաւանական է, որ Վարդան կամ Լեոն անուն ունեցողներն ալ պատժովն վաղը իբրև գրգռիչ:

Աստուծոյ «Փառքով»:

ԱՍՏՂԿԻ ՆԱՍԱԿՆԵՐՆ Ի ՄՈՍԿՈՒԱՑԷ:

Մասինս Ի 15 Փետրվարի 1881 ամի:

Վերջերս կանանց ասուած հարցը շատ է գրաւում Եւրոպացոց ուշադրութիւնը: Քրանսիացիք, որք մի ժամանակ խոյս էին տալիս այդ հարցից, այժմ մեծ ուշադրութեամբ են հետեւում այդ հարցի ընթացքին: Երբ որ Փարիզում, Քրանսիայի կենդրոնում, նշանակուած է հրապարակական դաստիարակութիւն այդ բնաբանի վերաբերութեամբ, ժողովուրդը խուռն բազմութեամբ լցվում է այն դահլիճները, ուր նշանակուած է լինում դաստիարակութիւնը և ուշադրութիւնը լարած՝ սպասում է այդ հարցի վերայ խելացի կարծիքներ լսելու: Կանանց հարցի առաջին արծարծողները Քրանսիայում եղան՝ Լէգուվէ, Միշլէ, Ժիւլ-Միսոն և Պելլան, և այդ գործը կատարում էին նոքա թէ՛ գրուածների և թէ՛ հրապարակական դաստիարակութեանց միջնորդութեամբ:

Մյուսպիսի դաստիարակութիւններից մէկը այդ հարցի մասին նշանակուած էր Փարիզում՝ Սորբոնայի մեծ դահլիճում, Յունուարի 23-ին: Գաստիսոտըն ևր ակադեմիկ Լէգուվէ, որ հռչակաւոր է իւր «Histoire morale des femmes» գրուածքով: Կա իւր խօսքը սկսեց այսպէս. «Շատ հարցերից յետոյ վճռուելու կարգը հասել է կանանց հարցին: Թատարոնում, գրեթեում, օրագիրներում, դատարաններում, մի խօսքով ամենայն տեղ խորագէտ մարդիկ պահանջում են՝ որ բարեօրոյի կանանց գրութիւնը: Մինչև անգամ Ակադեմիան նշանակել է 5000 Փոանը վարձատրութիւն այդ հարցի վերաբերմամբ ամենաշաջող գրուածքի համար»:

Այդ դաստիարակութեան նպատակն, ինչպէս յայտնեց ինքն Լէգուվէ, է ՚ի մի ժողովել այն բոլոր կարծիքները, որ յայտնել են Քրանսիայի երևելի մարդիկը այդ մասին և յոյց տալ թէ մինչև որ աստիճան իրագործվել է ներկայումս հաւասարութեան սկզբունքը, որ այնքան ընդհանրացել ու տարածուել է հասարակութեան մէջ: Խօսելով անցեալի վերայ՝ Լէգուվէ առաջ բերեց բանիմաց մարդկանց կարծիքները կանանց մասին և բոլորը միասին գումարելով այն եզրակացութեանը հասաւ, որ նոքա հերքում են կանանց հաւասարութեան սկզբունքը, համարելով նոցա երկրորդական էակներ, որոց կոչումն հաճոյանով է ազամարդկանց և միշտ գտնուել նոցա ազդեցութեան ու իրաւասութեան ներքոյ: Թէ՛ տեսականապէս և թէ՛ գործնականապէս այսպիսի լուծումն էր ստանում այդ հարցը մինչև ամենահիններորդ դարու սկիզբը: Եւ այսպիսի կարծեաց համեմատ հաստատուած էին կանանց վերաբերեալ օրէնքները, որոնք մեծ ազդեցութիւն ունեցան նոցա վարք ու բարքի և ընտանեկան կեանքի կազմակերպութեան վերայ: Բայց տասնևիններորդ դարու ընթացքում աստիճանաբար փոխուեցան այդ հայեացքները նոր գաղափարների ազդեցութեան ներքոյ, այնպէս որ այժմ զարմանալի է պիտի համարուի ակադեմիկ Լէգուվէի հարցը. «բաւական են արդեօք մինչև ցայժմ արած փոփոխութիւնը կանանց գրութիւնը բարեօրելու նպատակաւ», որին հրապարակաւ պատասխանում է հետաքրքիր ունկնդիրների ներկայութեամբ. «Ոչ, բաւական չեն, կինը հաւասար է ազամարդին, բայց նոյնը չէ, ինչ որ սա է: կնոջ հասարակական կացութիւնը բարեօրելու համար հարկաւոր չէ նորան, ինչպէս ասվում է՝ «ազամարդացնել», այդ կը նշանակէ՛ այլայլել, փոփոխել նորա էութիւնը, բնութիւնը, այլ հարկաւոր է միջոց տալ, որ նա ազատ զարգանայ իւր բնական յատկանիշների համեմատ: Իմ կանոնս է հաւասարութիւն, բայց ոչ բացարձակ»:

Սորանից յետոյ նա անցանում է դաստիարակութեան երկրորդ կէտին՝ թէ մինչև որ աստիճան իրագործել է ներկայումս հաւասարութեան սկզբունքը: Այս կէտի վերաբերութեամբ ասած խօսքերից կարելի է, գրեթէ մտաւորապէս, գաղափար կազմել այն յառաջադիմութեան մասին, որ արել է այդ հարցը Քրանսիայում, ուր կինը ամբողջապէս ստորագրուած է՝ հօրը, եղբօրը, ամուսնոյն մի խօսքով՝ ազամարդոց: Լէգուվէն արդէն պահանջում է, որ կանայք ոչ միայն բարձրագոյն և բազմակողմանի կրթութիւն ստանալու միջոց ունենան, այլ և ընդարձակուին նոցա իրաւունքները ընտանիքի մէջ և ամուսինների

վերաբերմամբ: Տեսականապէս դատելով՝ նա սորանից ևս աւելի է պահանջում, նա ուղղակի այսպիսի հարց է առաջարկում. «Պարտաւոր են արդեօք կանայք դեր խաղալ տերութեան մէջ, հասարակական և քաղաքական պաշտօններ պիտի վարեն նոքա, պիտի մասնակցին արդեօք պատգամաւորների ընտրութեանց, թէ ոչ»: Կա պատասխանում է այսպէս. «Եթէ իբրև սկզբունք վճռուել լինիք այդ հարցերը, անաւարակոյս՝ միայն դրական պատասխան կարող ենք տալ, որովհետև օրէնքը այնպէս է ասում»: Իւրաքանչիւր անհատ, որ ծնել է Քրանսիայում կամ ուր իրաւունք ունի Քրանսիացի կոչուելու, եթէ չափահաս և ողջամիտ է և դատաստանի որոշմամբ անարգ պատժի ենթարկուած չէ, իրաւունք ունի պատգամաւորների ընտրութեանցը մասնակցելու»:— «Կասկած չկայ՝ կանանց մէջ ևս կան, շարունակուած է նա, չափահաս, ողջամիտ և քրեական յանցանքը չգործած անհատներ, ուրեմն այս բոլորը օրէնքի զօրութեամբ իրաւունք ունին ձայն տալու ընտրութեանց ժամանակ: Եթէ մեզ հակաճառեն, աւարկելով, որ կանայք ստորագրուած են իւրեանց ամուսիններին, դժուար չէ լինիլ հերքել նոցա աւարկութիւնը, որովհետև առաջինը շատ կանայք իւրեանց ամուսինների իրաւասութիւնը չեն ծանաչում: երկրորդը՝ մեր ծառաները մեզանից աւելի կատարում ունին՝ քան թէ նոքա: այնու ամենայնիւ նոքա իրաւունք ունին ընտրութեանց մասնակցելու և վերջապէս՝ կան շատ այրի ու բողբոջիկ ջամուսնացած կանայք: Արեմն պարզ և որոշ կերպով ասում ենք. ընդհանուր կոչուած բուեակրութիւնը երբէք ճշմարիտ ընդհանուր չի լինիլ, քանի որ այդ բանին չէ՛ մասնակցում քաղաքացիների կէսը՝ կանայք: Ի դէպ է այստեղ յիշել մեր առաջին յեղափոխութեան հերոսուհիներից մէկի խօսքերը. «Կանայք իրաւունք ունին դատաւորներ լինելու, որովհետև իրաւունք ունին կատարանի բարձրանալու»: Ահա որպիսի եզրակացութեանց կարող ենք հասնել՝ եթէ դատենք միայն տեսականապէս: բայց չէ՛ որ սկզբունքը և տեսականութիւնը պիտի կից լինին գործողութեան և գործնականութեան հետ և օրէնքը սովորութեանց հետ: Աներկբայելի է, որ մեր այժմեան սովորութեանց ընդդէմ է կանանց մասնակցութիւնը պատգամաւորների ընտրութեան գործին, ՚ի հարկէ դժուար է հաստատապէս ասել միևնոյնը ապագայի մասին, որովհետև ժամանակով կարելի է միջոցներ և եղանակներ գտնուին, ուրոնցով հնարաւոր կարող է լինել կանանց մասնակցութիւնը, բայց ներկայումս՝ 1881 թուականին՝ եթէ տան միլիոն ընտրող ազամարդկանց վերայ աւելանան նոյնքան ևս կանայք, ի՞նչ կը դառնան ընտրողական ժողովները, որպիսի խառնակութիւն կը տիրէ ընտանեաց անդամների մէջ: Իւրաքանչիւր տարի դատարանները կը լցուին խնդիրներով, որոնք մատուցուած կը լինին ապախարզան ստանալու համար: Այս դեռ բաւական չէ՛ եթէ կինը իրաւունք ունենայ ընտրելու, միևնոյն ժամանակ նա ընտրուելու իրաւունք կ'ունենայ: Ի՞նչ կանէիք, եթէ այս տարուայ ընտրութիւնը մեզ ապին հարիւր պատգամաւոր իգական սեռից: Ո՞ր տեղ կը տեղաւորէք նոցա, միթէ նոր դիւանատներ կը շինէք նոցա համար կամ այժմեան դիւանատները երկու մաս կը բաժանէք կամ միևնոյն նստարանները վերայ կը նստացնէք: Եթէ այժմ գանգաւորում են՝ որ պատգամաւորները շատ են խօսում, շատ են վիճում, ապա ի՞նչ կը լինի եթէ նոքա երկուսի լինին և աւելի բազմութիւն: Միև կողմից՝ ի՞նչ պիտի անեն այդ ընտրուած կանանց այրերը: Ի դուր առաջ կը բերեն նոքա օրէնքների 217-դ յօդուածը, որ ասում է. «կինը պարտաւոր է հնազանդիլ իւր մարդին», որովհետև եթէ նոքա ուղենան գործադրել այդ իրաւունքը և թոյլ չտալ իւրեանց կանանց դիւանատներ երթալու, այս վերջիններս կը պատասխանեն. «մենք ժողովրդի հաւատարմատարներն ենք և ձեզ հնազանդեցնելուց առաջ պարտաւոր ենք հնազանդիլ մեզ ընտրող ժողովրդի կամքին»: Ո՞չ, այսպիսի մի վերանորոգութեան ժամանակը դեռ չէ՛ հասել, եթէ իրագործենք մեծ անբաւականութիւնը և անչափ ծիծաղ կը յարուցանենք»: Այսպէս վերջացուց դասախօսը իւր ասելները:

Մեր կողմից այդքանը միայն կ'աւելացնենք, որ այդ վերա- նորոգութեան համար պատրաստ չեն ֆրանսուհիք ժամանակով գուցէ լինին, բայց միւս կողմից պէտք է խոստովանուինք՝ որ լեզուովի առաջ բերած պատճառները և անյարմարութիւնքը վերին աստիճանի թիւր և անհիմն են:

Ետաքրքրութեան արժանի է նոյն իսկ ֆրանսուհեաց վե- րաբերութիւնը դէպ 'ի կանանց հարցը: Մէկ կողմից՝ միջին և հասարակ դասակարգերի կանանց թուում մենք հանդիպում ենք այնպիսիներին, որոնք շատ արմատական փոփոխութիւնք են պահանջում յօգուտ իրեանց իրաւունքները ընդարձա- կելու: Այսպիսիների պարագլուխ կարող են համարուիլ Լուի Միշլէն նման կանայք: Միւս կողմից՝ բարձր դասակարգի, ազնուապետների կանայքը բոլորովին անտարբեր, մինչև ան- դամ ընդգէմ են այդ բանին: Սոքա մեծ մասամբ պաշտպանու- զական ուղղութիւն ունին: 'Ի զուր չէ, որ Figaro լրագիրը իւրաքանչիւր երկու շաբաթից յետոյ կրկնում է, որ «հասա- րակապետութիւնը կանայք չունի». սա անտարակուսելի իրո- զութիւն է: Բարձր դասի կանանց հակակրութիւնը դէպ 'ի կանանց հարցը այսպէս է բացատրում մի ֆերմանացի, Նոր- դաու անուն, իւր «Paris unter der dritten Republik» (Փարիզը երրորդ հասարակապետութեան օրով) գրքում:

«Բարձր դասակարգի ֆրանսուհիք անկարող են մտերմանալ հասարակապետութեան հետ. նոքա՝ կայսերութեան օրով՝ ունէին պալատական տիտղոսներ, պատուաւոր տեղեր, շքանշ- շաններ: Իսկ հասարակապետութեան օրով այսպիսի բան չկայ: Այն ժամանակ պալատում լինում էին պարահանգեսներ և ուրիշ հանդէսներ ու տօնախմբութիւններ, որոնք տիկնանց սպարէզ էին բայ անում փայլելու, զարդերը ցոյց տալու և սոցանով իւրեանց հակաակորդների աչքերը շլացնելու: Հա- սարակապետական տօնախմբութիւնները նոցա համար չեն կարող փոխարինել արքունեաց հանդէսները, որովհետև առա- ջինները մատչելի են ամենեցունց, ուստի նոքա այլ ևս չեն կարող հպարտանալ հրաշքական տոնակներով իւրեանց ծա- նօթների առաջ, և վերջապէս փարիզուհեաց սիրելի զբաղ- մունքը՝ պճնիլ ու հաճոյանալ, որ լայն ասպարէզ ունէր կայ- սերութեան ժամանակ, այժմ կորցրել է իւր քաղաքական նշանակութիւնը: Այժմեան ֆրանսիայի բարձրագոյն տօն ան- ձինք հպարտանում են նորանով, որ իւրեանք մի կողմով կատոններ են և ոչ մի կին զեր չէ խաղում նոցա քաղաքա- կան գործունէութեան մէջ: Բարձր դասակարգի կանայք սկզբ- բում համակրանքով ընդունեցին հասարակապետութիւնը: Նոքա անհրաժեշտ կարիք համարեցին ներկայ գանուիլ պատ- դամաւորաց նիստերին և քաղցրաւենիք ուտել վերսայիլ

ապարանքներում: . . . Սակայն հասարակապետութիւնը շնոր- հակալութիւն չը յայտնեց այդ անուանի տիկնանց սոցա ար- տայայտած համակրութեան համար և սոցա ներկայութիւնը օրէնսդիր ժողովարանի սրահներում չը յափշտակեց պատգա- մաւորներին: Այս պատճառով այդ տիկնայքը շուտով հրա- ժարուեցան այդպիսի արարմունքներից, և յայտնելով, որ հասարակապետութիւնը «տղէտ է և ապրելու եղանակը չը գիտէ», երես դարձրին և փակուեցան իւրեանց ազնուապետա- կան դահլիճներում»:

Այսպէս է խօսում վերոյիշեալ ֆերմանացի Նորդաուն: Իբրև բացառութիւն այս մեծամասնութիւնից պիտոյ է յի- շել նաև փոքրամասնութիւնը, որ բարձր դասին պատկանելով՝ այնու ամենայնիւ ուրիշ կերպով է վերաբերվում դէպ 'ի հա- սարակապետութիւնը: Այս փոքրամասնութեան տիպը կարող էր համարուիլ Տիկին Թիեռ՝ ֆրանսիայի հասարակական գոր- ծիչի և երրորդ հասարակապետութեան Աւաջին Գահազլիսի (պրէզիտենտի) կինը, որ վախճանեցաւ անցեալ տարուոյ վեր- ջերում, երեք տարի ու երեք ամիս իւր ամուսնոյ ժահից յետոյ, իսկ տկարացաւ այն օրը, երբ Սէն-Ֆերմէնում իւր ամուսնոյն՝ Թիեռին, արձան կանգնեցնելու հանդէսն էին կատարում: Հակառակ միւս բարձր դասին պատկանող տիկնանց՝ Տիկին Թիեռը իւր համար պատիւ ու բաղձ էր համարում իւր անձնա- կանութիւնը մոռացման տալով՝ ապրել այլոց համար:

Իւր ամուսնոյ կենդանութեան ժամանակ, Տիկին Թիեռ, օգնում էր նորան գործավարութեան կողմից. բայց երբէք քա- ղաքական հարցերի մէջ չէր խառնվում, այլ ընդհակառակն՝ իւր գլխաւոր ու սրբազան պարտականութիւնն էր համարում հոգալ տան կառավարութիւնը, որպէս զի իւր ամուսնը օրա- կան աշխատանքից յետոյ հանգստութիւն գտանէ իւր գերդա- ստանում: Անցողավարութեան կողմից նա բաւականին հա- մեստ ու պարզ սրտով էր, մինչև անգամ երբ նորա ամուսինը առաջին անձն էր համարվում ամբողջ ֆրանսիայում, բայց և այնպէս հարկաւոր դէպքերում այնպէս էր իւրեան պահում, որ ոչ մի հակառակորդ արատ չէր գանում նորա արարմունքի մէջ: 'Ի դէպ է ասել, որ սորա ամուսնանալն Թիեռի հետ, մեծ ազդեցութիւն ունեցաւ վերջնոյս ապագայ գործունէութեան վերայ: Սոքա պատկուեցան 1833 թուականին: Տիկին Թիեռ լինելով հարուստ կապալաուուի դուստր՝ իւր հետ բերեց իբրև օժիտ հինգ միլիոն ֆրանք: Այս նշանաւոր կարողութեան շնորհն էր, որ հանգուցեալ Թիեռ միշտ ինքնուրոյն մնաց իւր բոլոր ձեռնարկութեանց և պաշտօնավարութեանց ժամանակ:

Ասորիկ:

ՆԱՍԱԿ ԱՌ ԻՐԱՏԱՐԱԿԻՉՆ 'Ի ՊԵՏՐՐՈՒՐԳԱՅ:

Պետրբուրգ. 24 Յունուարի 1881 թ:

Ուսուից մայրաքաղաքների, այն է՝ Մոսկվայի և Ս. Պետեր- բուրգի հայ ուսանողներն զեղեցիկ սովորութիւն ունին, իւրա- քանչիւր տարի մի կամ երկու անգամ, թատրոնական ներկա- յացումներ տալ յօգուտ իւրեանց չքաւոր ընկերակիցների: Նոքա, մեր Խ-երրորդ սակեղարու երիտասարդների նման, թուղ- նելով տունուտեղ ևս և անձկալի ծնողներին, խուռն բազմու- թեամբ գիմում են դէպ 'ի անձանթ և հետաւոր երկերներ, իւրեանց ուսումնատեսչ փափազն լրացնելու համար: Բայց, որ փոքր 'ի շատե հասակցող հայ մարդուն յայտնի չէ, որ վերո- յիշեալ աշխոյժ պատանիք, յառաջ քան իւրեանց սուրբ նպատակին հասնելն, քանի՛ քանի՛ խօչնդտանների են հանդի- պում օտարութեան մէջ: Թող չափազանցութիւն չհամարվի ասելը, որ, եթէ Հայաստանի հողի վերայ, մեր վանցի և Մշէցի եղբայրները, ութ դար անընդհատ, դառն հարուստներ են կրում ճակատագրից, հետու հիւսիսում, հայ ուսանողներն ևս առիթ չունին շատ գոհ լինելու նոյն իսկ ճակատագրից: Այստեղ, մեր երիտասարդներից ոմանք, ենթարկվելով անբա- րեխաւն կլիմայի աղբեղութեան՝ յաւիտեանս զրկվում են հայ- բնիք վերադառնալու բախտից, շատերն չարաչար հիւան- դանում են, միւսերն կարօտ են մնում մի կտոր հացի: Այսպիսի

ողորմելի դրութեան մէջ, ո՞վ պէտք է դարման տանի նոցա յաւերին, եթէ ոչ նոյն իսկ նիւթապէս աղքատ և բարոյապէս հարուստ ուսանողներն: Արդէն մի քանի տասնեակ տարի է, որ Մոսկվայում և Ս. Պետերբուրգում նոքա ընկերութիւններ են կազմել, որոց անգամներն պարտաւոր են իւրաքանչիւր ամիս մի մասնաւոր սուրբ տալ յօգուտ չունևորների՝ բայց որով- հետև այս սրից քանակութիւնը՝ բազմիցս չէ կարողանում լրացնել շատ պակասութիւններ և աղքատների թիւը օրա- ւուր, անդադար, աճում է, ուստի, ինչպէս վերը նկատեցի ուսանողներն հարկադրված են լինում, թատրոնական ներկա- յացումների միջնորդութեամբ, աշխատել հարստացնելու իւ- րեանց գանձարանը:

Սակայն մինք ճշմարտութեան դէմ մեղանշած կլինէինք, եթէ պնդէինք, թէ՛ թատրոնական ներկայացումներն լոկ շա- հասեր նպատակներին են հետամուտ լինում. քաւ լինի այդ- պիսի մի վեթիւարի ենթադրութիւն: Հայոց ներկայացումներն ունին աւելի վսեմ նպատակ, որոյ մասին աւելորդ չէր լինի ասել մի քանի խօսք: Մոսկվայի և Ս. Պետերբուրգի հայ հա- սարակութիւնները, ցաւօք սրտի պէտք է խոստովանիլ, որ ըստ մեծի մասին, ապրում են առանձին. ընտանեաց մէջ երթեկու-

Թիւնը սակաւ է միայն ազգականներ կամ երկրակից մօտ բարեկամներ յաճախում են միմեանց տները: Իսկ մնացեալ Հայերն երկար տարիներ շարունակ, այնպիսի անմեկնելի յամառութեամբ փախչում են միմեանց ծանօթութիւնը որոնելուց, որ կարծես թէ ոչ միեւնոյն պատմական ազգի զաւակ են և ոչ էլ հասարակաց շահեր ունին: Արեւմտեան տիտուր երեւոյթի ազդեցութեան ներքոյ, մենք ակամայ ստիպված ենք ուրանալ Հայոց հասարակութեան գոյութիւնը, բառիս բուն նշանակութեամբ և պէտք է ասենք, որ յիշեալ քաղաքներում կան մեզ հարազատ Հայեր, որոնք զանազան ժամանակ և զանազան տեղերից գաղթել են այս կողմեր: Բայց, նշմարվում է արդեօք նոցա մեջ համերաշխութեան (солидарность) նշոյլը: ահա մի ծանրակշիւ հարց, որուն մեզանից ոչ ամենը կ'յանդգնի դրական պատասխան տալու: Մայրաքաղաքներիս Հայերի մեջ կան անհասական քանքարներ, կան մարդիկ, որոնք իւրեանց գիտութեամբ, զարգացմամբ և հասարակական բարձր դրութեամբ պատիւ կարող էին բերել Եւրոպացոց կրթեալ ազգերին, բայց կրկնում եմ: հասարակութիւն մեր մեջ՝ բնաւ չկայ:

քաղաքներիս մեր ազգայինը՝ իւրեանց բարձր ուսմամբ և նիւթական կարողութեամբ, կենդանութեան նշոյլ չեն ցոյց տալիս: Արում շատ տուաւ, շատ խնդրեցի: Այս անհերքելի ճշմարտութիւնը, կարծես, մեզ չէ վերաբերվում և մենք, տակաւին, շարունակում ենք զբաղել լոկ անձնական գործերով: Ինձ, գուցէ, օմանք յանդիմանելով ասեն՝ ինչպէս կարելի է մոռանալ Մոսկվայի և Ս. Պետերբուրգի Հայերից նոցա, որոնք իւրեանց գրականական երկասիրութեամբ և ազգասէր գործունէութեամբ, ամենայն իրաւամբ, ազգի բարերար պիտի համարվին: Հարցնողներին ես կ'պատասխանեմ այսպէս՝ երախտագէտ Հայոց ազգի զաւակն, որ յականէ, յանուանէ ճանաչում է յիշեալ բարերարներին, չ'պէտք է ուրանայ նոցա վսեմ արժանաւորութիւնը: բայց, մի քանի անձինք, միայն, չեն կարող Մոսկվայի և Ս. Պետերբուրգի Հայոց հասարակութիւնը կազմել, որպէս և մեկի կամ միւսի լաւ յակութիւնը անհնարին է առգրել բոլոր տեղացի Հայերին: Վերջինների միահամուռ ասենել ցանկացողներն թող զնան Հայոց եկեղեցի եկեղեցոյ գուրս, նոքա շուրին ուրիշ ժողովարան, ուր կարելի լինէր լսել



ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ:
(ПЕТЕРБУРГСКИЙ УНИВЕРСИТЕТЪ.)

Մեզանում ամենայն մի բարի գործ կամ որ և իցէ ձեռնարկութիւն անհասական սկզբունքի արգասիք է հասարակութիւնը լուռմէ, վասն զի, իրօք, նա գոյութիւն չունի: Իսկ ուր հասարակութիւն չկայ, այնտեղ դժուար է պարաստանաշուութիւն ապա ուրեմն սերտ միութիւն որոնելն: Մեր Հայերիս կղզիացած ազրիւն, միմեանց հետ հաղորդակցութիւնից խորշին, ինձ համար կատարեալ հանելուկ է: Տարակոյս չկայ, որ բացառութիւն լինում բայց է, իմ խօսքս բնդհանուրի վերայ է: Մի, երկու ծաղիկ գարուն չեն բերի: Մեծ սոններին Հայոց եկեղեցի մտնելիս, մարդս զարմանում է, երբ տեսնում է այնտեղ խուսն բազմութիւն իւր արիւնակից եղբայրների: բայց թէ դժք են այս եղբայրներն, նորէկ են, թէ մշտական բնակիչ մայրաքաղաքների, ինչ բարոյական համոզմունքի կամ զարգացման տէր են, հարցնող չկայ: Արդ, եթէ մեզ չէ հետաքրքրում մեր մտաւոր հայրենակցի վիճակն, ինչ պիտի յուսան մեզանից հեռաւորներն, նոքա, որոնք, մի քանի դար շնչասպառ հեծեծում են Հայաստանում, ահեղ բռնաւորութեան ասկ: Այս տողերը գրելով, ես դիտաւորութիւն չունիմ ամենեւին շուսփելու ում և իցէ պատիւր կամ ինքնասիրութիւնը, այլ ակնյանդիման եմ կացուցանում այն անմխիթար իրողութիւնը, որին ևս ինքս եմ վկայ: Հոգեով չափ ցաւում եմ, որ մայրա-

Հայկական բարբառը, ծանօթանալ և ճանաչել միմեանց:
Եթէ մի լուսաւորեալ եւրոպացի կողմնակի կերպով իմանայ, յանկարծ, մեր անսովորական կենցաղավարութեան եղանակն, նա տհաճութեամբ պիտի բացազանչէ զարմանալի մարդիկ են այս Հայերս, նոքա, կարծես, ոչինչ անհրաժեշտութիւն չեն զգում միմեանց մօտենալ, ազգային հարցերի մասին խորհրդակցիլ, հասարակական շահեր յարուցանել: ուրեմն ինչո՞հ համար են նոցա ստացած ուսումն, կրթութիւնը և բանիբուն խելքը, որ անդադար զարգացնում են զանազան գիտութեանց ճիւղերով, առանց ՚ի գործ դնելու այդ ամեն հաղուագիւտ գանձերը:
Ուստի ցանկալի կլինէր, որ վերջապէս մեր մեջ հաստատվէր մի անբակտելի ազգային միութիւն: արդարև, այն ժամանակ, միայն մենք իրաւունք կունենայինք ասելու թէ՛ Մոսկվայում և Ս. Պետերբուրգում Հայոց հասարակութիւն կայ, որ ջատագով է անեղական և ազգային շահերի: Եթէ փոքրիկ բազուն կարող է պարծենալ իւր մարդասիրական ընկերութեամբ, Թիֆլիզը իւր բազմաթիւ ծխական ուսումնարաններով և տպագրական ընկերութեամբ, ներելի՞ է արդեօք Մոսկվայի և Ս. Պետերբուրգի Հայերին իւրեանց առձեռն նիւթական և բարոյական ոյժերով յամուել յարասե անշարժութեան մեջ:

Այս հարեանցի նկատառութիւնից յետոյ մայրաքաղաքացի ազգայնոցս վերաբերութեամբ, դառնանք կրկին հայ ուսանողներին: Արջիւններս, ինչպէս ընթերցողը տեսաւ, թատրոնական ներկայացումն տալով բարեգործական նպատակաւ, այն է յօգուտ չքաւոր ընկերների, կամենում են միեւնոյն ժամանակ նպատակ տեղւոյն Հայերին ընտանեկան կերպով մի քանի անգամ ուրախ երեկոյ վայելել իւրեանց բարեկամների և հայրենակիցների շրջանում:

Այսպիսի երեկոներից մինն, տեղի ունեցաւ Յունվարի 9 ին ներկայ 1881 ամի Պ. Կոնստանտինովի տանը: Ուսանողներն խաղացին Թիֆլիզի կեանքից առած երկու հեռեկալ պիեսաներն «Գալալ Ղազ» և «Գիշերվայ սաբբը խէր»: Կերկայացումն առհասարակ լաւ անցաւ և դերասաններից՝ արժանացան բուն ծափահարութեանց, հանդիսականաց կողմանէ: Կերկայացումից յետոյ եղաւ մի փառաւոր պարահանդէս, ուր ՚ի միջև Էրոպացոց պարերի, տեղի ունեցան նաև Կովկասեան ժողովրդական պարեր: Երոց մասնակցեցան հանդիսականներից շատերն: Հասարակաց ուրախութիւնը այնքան անկեղծ էր և ընդհանուր,

որ դահլիճը թնտում էր անընդհատ ծափահարութիւնից: Պարահանդէսը տեղեց մինչև առաւօտեան 4 ժամն: Ստացուած գումարի մի մասն ուսանողներն մտադիր են ուղարկել Հայաստանի սովալուկ եղբարց:

Գերահասակ Յովհաննէս Այվազեանի և մեր մի քանի միւս հայկազանց ներկայութիւնը այս երեկոյին, իրաւունք է տալիս մեզ ասելու, որ Յունվարի 9 ին տեղի ունեցած հանդէսը կատարեալ հայկական էր:

Վերջացնելով նամակս, աւելորդ չեմ համարում յիշել՝ որ մայրաքաղաքիս Հայոց եկեղեցում, Յունուարի 18 ին, հանդիսաւոր կերպով կատարվեցաւ հանգուցեալ Տէր-Ղուկասեանի հոգեհանգիստը: Բաց ՚ի մեր հասարակութեան և օտարազգի անձանց խուսն բաղմութիւնից, այն տիւրը հանդիսին, ՚ի միջև այլոց՝ ներկայ էին նոյնպէս Տ. Կերբին-Գործոց Կախարար Կոնստանտին Միքայէլ Տարիէլեան Լուիս-Մէլիքեանց, Ստատս-Սեկրետար Յովհաննէս Գալթեան Գեղանեանց, երեկելի հայազն նկարիչ Յովհաննէս Այվազեանց և այլք:

Մ. Էրկրեան:

Գ Ի Տ Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ի Ա Ր Ո Ւ Ե Ս

Ք Է Լ Ն Ի Տ Ա Մ Ա Ր Ը :

Անցեալ ամի Օգոստոսի 3 ին, առաւօտեան ժամը 10 ին, աւարտեցաւ Քէլնեան տաճարի կառուցումը խաչի կանքնումովն, և ամբողջ քաղաքն զարդարեցաւ դրօշակներով ՚ի պատիւ այս դիպուածի: Յիրաւի, այս դիպուածս՝ արժանի յիշատակի է, եթէ ՚ի միտ բերենք բոլոր փոփոխականութիւնները, որոց ենդարկեցաւ այս հրաշալի յիշատակարանս, որ մի է յամենագեղեցիկ յիշատակարաններից աշխարհիս վերայ, և յամենաընդարձակ շինուածներից գոտիկական ճարտարապետութեան: Տաճարիս մասին ժողովրդի մէջ պատմուած Ա. Էպիստոլում էր թէ Քէլնեան տաճարի շինութիւնն երբէք չպիտի աւարտի, հետեւեալ պատճառաւ:

Մէկ երիտասարդ ճարտարապետ, յուսահատութեան մէջ, թէ նորա նախագծներից ոչ էկն ևս չէ բաւականացնում Արքեպիսկոպոսին, եկաւ Ռէյն գետի եզերքին խեղդուելու նպատակով: «Նոյն բուպէին, երբ նա մտածում էր ընկնել ջուրը, նորա առաջը կանգնեցաւ մի ձերուսի մարդ, որ էր ոչ այլ ոք՝ եթէ ոչ ինքն սատանան, և առաջարկեց նորան, հոգւոյ, փոխարէն, հրաշալի նախագիծ, այն է՝ այժմեան տաճարի նախագիծը: Արիտասարդս խնդրեց 24 ժամ մտածելու համար, և գնաց խորհելու իւր հոգեւոր հօր հետ: Վերջինս սովորեցուց նորան մի հնարք, որ և երիտասարդս կատարեց իսկութեամբ: Միւս օրը երբ սատանան ցոյց էր տալիս նորան նոր նախագիծը և յիշեց՝ թէ որպիսի պայմաններով նա կարող է ստանալ նորան, երիտասարդ ճարտարապետս հանկարծ խլեց նորան նորա ձեռքից և շուտով հանելով իւր հանդերձի տակից

մասունքն սրբոյն Ուրսուլայ, խփեց նորանով չար հոգւոյն ճակատին: Սատանան իսկոյն հասկացաւ, թէ նորան խաբեցին: «Այդ եկեղեցւոյ սատանուութիւնն է, բացաքանչեց նա. բայց կաթուղիկէ տաճարն, որոյ նախագիծն դու խլեցիր ինձանից, երբէք աւարտելու չէ, և քո անունդ կը մնայ անյայտ»: Ասելով այս՝ սատանան իւր ճանկերով ձղեց նախագիծի վերին մասը: Արիտասարդս մեռաւ արբամութիւնից, չունելով կարողութիւն ամբողջացնել նախագիծը:

Շատ տարիների ընթացքում, դիպուածքն իբր թէ ճշմարտեցնում էին այդ վէպը: Շինութիւնն կաթուղիկէ տաճարիս, որ սկսուած էր 1248 թուականին շարունակուեցան մինչև 1509 թուականն. բայց այս երկար միժոցիս մէջ նա շուտ շուտ դադարում էր արիւնահեղ պատերազմի պատճառաւ, որ քաղաքացիք քանիցս անգամ ունեցան ընդդէմ իւրեանց Արքեպիսկոպոսին: Գեղեցիկ շինուածքն տաճարիս, որ Գաղղիական ոստիկանութիւնից փոխուած էր շտեմարանի զօրաց համար, և որ անչքացիկ էր ժամանակի և մարդոց ազդեցութեամբ, փոքր մնում էր որ բոլորովին կործանուի, և անտարակոյս կը կործանուէր, եթէ չ'զարթներ արխեօլոգիական եռանդն և կրօնական աստուածազդեցութիւնն. կազմուեցան ընկերութիւններ և ձեռնարկուեցաւ, օգնականութեամբ յօժարակամ նուիրաբերութիւնների, աւարտել հսկայական ստեղծուածքը, որ մտածուած էր Միջին դարերում: Կուրիատուութիւնքը սկսան թափուիլ ամեն կողմից՝ այն ժամանակուայ Բրուսաց թագաւորն Ֆրիդրիկոս-

Վիլհելմ Ղ. պարտաւորեցաւ իւրաքանչիւր տարի նուիրել 50,000 թալէր, և Սեպտեմբերի 4 ին 1820 թուականին, կատարուեցաւ տաճարին երկրորդ հիւնարկութիւնը: Այդ օրը դարձաւ փառաւոր օձնի, որոյ յիշատակութիւնը պահում է Վէյն քաղաքը

մինչև ցայսօր: Այդ ժամանակից շինութեան մէջ արգելքներ չպատահեցան և վախճուն տարի բաւական եղաւ վերջացնելու համար այդ հոյակապ ձեռնարկութիւնը:



ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ԿԱՐԳԱ ՈՒ ԿԻՍԱՆԱՍ

ԵՐԿՈՒԱՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ:

— Բարով, Պարուն Համբարձում: Ուրախ իմ, որ պատահեցայ գիտին նոր բան: Թուրքի Ղաղօյի մօտ էի, ասում է թէ ուստեղար չիմ իմանում որ գաղթեցին կարգացել է, վուր Սի Վաթողիկոսը Պոլիս է եկել և ուզում է բոլոր Հայերի վրայ Պատրիարք դառնալ: Ի՞նչ կասես...

— Ի՞նչ ասեմ. կար ժամանակ երբ էջմիածնում: Վաթողիկոս չը կար, և կային Ստում ու Աղթամարում, և նորա եպիսկոպոսներ էին ձեռնադրում, մեծն օրհնում, նուիրակներ ուղարկում: Եթէ իժում էլ ըլի էպիսի մի բան, զարմանալի բան չի, մանաւանդ վուր Թուրքերին էլ ձեռնաու է...

— Յետոյ մեր Սուրբ Էջմիածինը, մեր անդրանիկ ճեմարանը վունց կուլին, մեր նուիրած փուղերը...

— Վ ունց կուլին. իհարկէ կուլնան ինչպէս վուր կան: Հաւատա՞ Գեորգ Արտեմիչ, որ էլի էն կուլի, ինչ վուր է: Աստուած Պոլսի Ներսէս Պատրիարքին կեանք տայ եթէ մեր ազգի համար մէկ օգուտ դուրս գայ, ելի նրա ձեռքով կուլի...

— Ապա Չերանգը. չիս կարգացել, վուր ասում ին՝ թէ Գլադստոնի հետ տխուրութիւն է արել:

— Յետոյ:

— Յետոյ նա էլ ասիլ է թէ Անգղիան անպատճառ կուսայ Հայաստանին վարչութիւն:

— Բայց երբ:

— Երբ. եղ չէ ասել, բայց կարծեօք շուտով, Յունաստանի



ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄ:

գործերից յետոյ, եթէ Աստուած նրան կեանք տայ: Ծիր մարդ է. ո՞ գիտէ ինչ կը պատահի:

— Չը մտնանամ, ասո՞ խնդրեմ, մեր թուրքի Ղաղօն վունց է, վաղուց է չեմ տեսել:

— Վ ունց պէտք է լինի գիպ իր էջն է քչում, գանգաւում է թէ շատ երեխերք ունի, թէ շատ ծախս է գնում. ահա, ասում է, մեր քահանային էլ համը տարան, եթէ, ասում է, նոցա Մոսկովի ու Պետրբուրգի հոգևորականների պէս ուճիկ, տուն ու փայտ տային, ինչպէս սկզբից նշանակել էին Վաղրովէնը, իժում նոցա շուտ շուտ խաչով ման գալն ասունէ տուն աւերորդ կուլիներ...

— Ի՞նչ տուտուց տուտուց խօսում է. չի իմանում վուր Մոսկովի ու Պետրբուրգի բանը ջոկ է, թիֆլիզինը ջոկ... Չէ, դու աւելի լաւ է ասո՞, աղջիկդ վունց է...

— Վ ունց պէտք է լինի, իսկի տանը չի նստում. ասում է թէ ես Ֆրանսէվար գիտեմ, էգպիսի եղի հետ, ինչպէս է ձեր Մակար Իվանիչը, երբէք չեմ պատկիլի... Բայց նա էլ, յ, ի՞նչ ետեկածն է, ասում է, Հայ աղջիկ չեք տալ, Նեմկայ կանեմ, գիպ խելօք ու ուսեալ մարդիկը Նեմկաների վրայ են պատկիլում... լսում ես...

— Հա՛, լսում իմ. բայց իժում մնաս բարով, գնում իմ Մեծ Պատի համար լույս բան առնելու...

— Մի՞թէ ուզում իս պաս պահել: Իժում քահանային էլ չեն պահում. անցեալ տարի, միտս է, ինչպէս մեր եկեղեցու աւագ քահանային, Մեծ Պատի երկրորդ շաբթիւն, մէկի տանը, պար էնպէս կերաւ որ քեփոգ գայ... Յը տխուրութիւն...

Մ. Ժ. Կ:

ԺՅՍՄԻՆՑ Է:

* * *

ՂՃմարիտ է՝ որ 1881 տարին պիտի տեսնէ Հայկական խրնդրոյ լուծումը:

* * *

ՂՃմարիտ է՝ որ Թուրքիայում, մեր ազգայնոց մէջ, շարունակվում է մօտ ազգականների վերայ ամուսնանալու սովորութիւնն:

* * *

ՂՃմարիտ է արդեօք Թերթեմանը Էֆեթարի գրածն՝ թէ Փարոս Թուրքիոյ Տպագրական տեսչութեան կողմանէ արգելուած է Տաճկաստան մտանել *):

*) Կ. Պոլսէն մեր ստացած վերջին տեղեկութեանց նայելով Թերթեմանը Էֆեթար լրագրի Փարոսի արգելման մասին տարածած լուրն բոլորովն սուտ է և անհիմն: Հրատ.

ԹՂԹԱԳԻՐ



ՊԱՏԱՍԻԱՆԻՔ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Տպագրուելու չին. Ամիրայ: — Անտենը: — Քահանայ — Գե. րասան: — Չուարճալիք: — Վրէժ Մեղուաց: — Կըրպագրուին. Ամպամած Մասիս: — Շիրակի մի քանի հնութիւնները: —

Փարսի. Ա. Յ. Թ. Չեր նամակն ՚ի 14 էն Մարտի ստացար և կը տպագրուի:

Վաղրէժ. Ա. Մ. Փ. Չեր ուղարկած լուսանկար պատկերներն ստացար և կը տպագրուին ընտրանօք:

Ղ. Դ. Կ. Ա. Մ. Յ. Փարոսի իբր ընծայ կուղարկուի, բայց դրամ հաւաքել Չեր եկեղեցոյ շինութեան համար կարող չեմք:



ԱԶԳԱՆՈՒԷՐ ՀԱՅՈՒՅԵԱՅ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՆՊԱՏԱԿ

ՀԱՅ ԻԳԱՎԱՆ ՍԵՌԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆՊԱՍՏԵԼ

Երկար ժամանակէ հետէ Հայաստանի մէջ ուսում ծաւալելու պէտքը զգալի եղած էր. սակայն առ այդ աշխատութիւնք վերջին տարիներուս մէջ աւելի սկսան 'ի յայտ գալ, երբ փորձառութիւնն արդէն բոլոր մտաց մէջ եղած այդ իրաւացի գաղափարներն հաստատեց:

Այլ այս շարժումն արական սեռին կողմանէ էր միայն, եւ Հայուհին տակաւին անտարբեր կը մնայր:

Ազգիս այսօրինակ փրկարար եռանդեամբ վառուած միջոցին՝ անշուշտ ոճիր մի էր սոյն անտարբերութիւնն այն սեռին համար, որոյ յանձնուած է մարդկութիւնը քաղաքակրթելու եւ նորա ապագայն բարւոքելու մեծ պաշտօնը:

Աւստի ընկերութիւնս առաջին անգամ եկաւ փառասել սոյն անտարբերութեան մշուշը հրաւիրելով զՀայուհիս իրենց կոչման ծառայիլ: Գրեթէ բոլոր Հայ Տիկնայք եւ Օրիորդք եկան հաւաքուեցան սոյն զրօշակին ներքեւ, ու սկսան իրենց ջանքերը միացնել Հայաստանի աղջկանց մտաց մէջ լոյս սփռելու:

Ընկերութիւնս իւր ձեռնարկութեանց մէջ հետ-

զհետէ քաջալերուած՝ սկսաւ իւր նպատակի գործադրութեան, եւ առաջին շրջանի փակման նստին մէջ որոշեց իւր նախկին վարժարանն հաստատել Տաւրոսի Վրլի քաղաքը ձեռամբ Արարտեան ընկերութեան, որն որ այդ մասին հարկ եղած սկզբնական կարգադրութիւններն ընկերով՝ յանձնեց Հայոց Միացեալ ընկերութեանց զայն 'ի գլուխ հանել:

Ինչ որ գործեց ընկերութիւնս իւր առաջին շրջանին մէջ՝ իւր նպատակի գործադրութեան սկսելու կարող վիճակ մի ստանալու համար էր, եւ իւր ձեռնարկութեան յապտղման պատճառն՝ հաստատուն զիրք մի ունենալու պէտք եւևթ:

Սոյն աշխատութեան միջոցին թէ նիւթական եւ թէ բարոյական օգնութիւն չը խնայուեցաւ իրեն. աներկբայի է որ իւր նպատակին գործադրութեան համար սարած ջանից մէջ կրկինը պիտի գտնէ 'ի յառաջդիմութիւն իգական սեռին, որ ճշմարիտ երաշխաւորութիւնն է փրկութեան Հայրենեաց:

Կ. Պոլս, Իւլիսիոս 10 Յուլիս, 1880:

Արագրական գործակալութեան գրասենեակում Բ. Հասվերդեանի Թիֆլիսի մէջ (Վարձակալի Պրոսպեկտի վրայ, Աղէքսանդրեան այգիի մօտ): Բաժանորդագրվում են, թէ տեղական, թէ ուրուսաց և թէ արտասահմանեան պարբերական բոլոր հրատարակութիւններին, նոյն իսկ խմբագրատան յայտնած գներով: Օտար տեղերից թող բարեհաճեն զիմէլ հեռուեալ հասցէով: Въ Тифлисъ, въ газетное агентство В. Шавердова.

ПРИНИМАЕТСЯ ПОДПИСКА на 1881 годъ на Ежедневную газету „Кавказскій Курьеръ“. Подписная плата: городскимъ подписчикамъ, съ доставкой на домъ, по 4 руб. и иногороднымъ, съ пересылкою по почтѣ, по 5 руб. въ годъ; за полгода-же первымъ по 3 руб. и послѣднимъ по 4 руб. Подписка принимается въ г. Тифлисъ: въ конторѣ редакціи газеты „Кавказскій Курьеръ“. Иногородные подписчики адресуютъ: въ г. Тифлисъ, въ редакцію газеты: „КАВКАЗСКІЙ КУРЬЕРЪ“, на углу Графской и Атаманской улицъ, въ верхнемъ этажѣ дома Квятковскаго.

«ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ» պատկերազարդ հանդիսի 1879 և 1880 թուականի տետրերն կարելի է ստանալ վճարելով իւրաքանչիւր տետրի համար Բէ Բէ ուրբի: 1879 թուականի տետրից մնացած կայ 9 օրինակ. 1880 թուականի առաջին տետրից՝ 110, իսկ երկրորդից՝ 105 օրինակ:

ՀՍԿԱՅԱԿԱՆ ՁԵՌՔԵՐ, Անգղիական Վէպ, պատկերազարդ, տղայոց ընթերցանութեան համար. Գինն է 10 կ. (սակաւաւի):
ԼԻՂԲԱՅՐ ԵՒ ՔՈՅՐ, Գերմանական Վէպ, պատկերազարդ, փոքր տղայոց ընթերցանութեան համար. Գինն է 30 կոպ.
ԱՐՔԱՅԱՒՈՒՍՏԻՎԱՐԴԵՆԻ, Գերմանական Վէպ, պատկերազարդ, փոքր տղայոց ընթերցանութեան համար. Գինն է 35 կ.
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Կաթողիկոսաց Էջմիածնի 'ի Սիմէօնէ մինչև ցՅովհաննէս Ը. ամբ Տեառն 1763—1831: Գրեալ 'ի Մսերայ Մազիսարոսէ Մսերեանց Զմիւռնացոյ: Մոսկուա, 1876. 306 էրես. Գինն է 2 ռ.
Վաճառվում են «Փարոսի» խմբագրատանում:

„МАЯКЪ АРМЕНИИ“ ИЛЛЮСТРИРОВАННЫЙ ЖУРНАЛЪ,

НА АРМЯНСКОМЪ ЯЗЫКЪ,

ИЗДАВАЕМЫЙ ВЪ МОСКВѢ

СОФІЕЮ МСЕРІАНЦЪ.

№ 2.

ГОДЪ ТРЕТІЙ.

1881 ГОДА.

ԲՈՎԱՆԳՆԻՆԻՆԻՆԻՆ

	Էջ.
Ա. Վեհազնեայ Տիկին Աստարինէ Լազարեանց	1
Բ. Սիրուն էր իմ հայրենիք	2
Գ. Միրզայեան Մանուկ Պէյ ԳԼ. Ե. Ե. Ե. Ե.	—
Գ. Ի՞նչ է մեր յանցանք	8
Ե. Արշակ Յարութիւնեան Տէր-Ղուկասեանի զազաղի վերայ	—
Զ. Արշակ Յարութիւնեան Տէր-Ղուկասեանց	9
Է. Գաւիթ Տէնիեր	11
Ը. ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ	15
Թ. ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ՏԱՐԵԳԻՐ	16
Ժ. ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍ	23
ԺԱ. ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ.	24
ԺԲ. ՋԱՆԱԶԱՆ ԳԻՏԵԼԻԲ (Շապկի 2 և 3 էրևանեցում):	

ՅԱՆԿ ՊԵՏԱԿԵՐԵՅ

- Ա. ԺԱՄԱՐԱՆԱԿԱԿԵՑ ՀԱՅԿԱԶՈՒՆԻՑ:— Ա. Կասարինէ Մ. Լազարեանց (էջ 1):— Բ. Զօրապետ Արշակ Տէր-Ղուկասեանց (էջ 9):— Գ. Հիւպատոս Ռուսիոյ ՚ի վան Կ. Կամարական (էջ 15):—
- Բ. ՀԱՅԲ:— Ա. Հայ բեռնակիրք ՚ի Կ. Պոլիս (էջ 4):— Բ. Մոկացի Հայք (էջ 14):—
- Գ. ՏԵՍԱՐԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԻ:— Ա. Բուսաբանական պարտեզ ՚ի Սէն-Պիեր (էջ 5):— Բ. Ամստերդամ քաղաք (էջ 12):— Գ. Շուկայ ՚ի Սամարկանդ (էջ 13):— Գ. Պետրբուրգեան Կայսերական Համալսարան (էջ 22):—
- Դ. ՅԱՆԵԼՈՒԱԾ:— Վիճառից պատկեր Սրբազան Ներսէս Պատրիարքին Կ. Պոլսոյ:

Փարսա Հայաստանի հանդէսը ստանալ ցանկացողքն իրեանց նամակաց հասցէն գրելու են այսպէս. Вь Москву, Меньшикова башня, домъ Милованова, Въ Превосходительствѣ Издательнннхъ „Маяка Арменіи“ Софійы Мсеріанцъ. Տաճկաստանի Հայք կարող են բաժանորդ գրուել դիմելով ՚ի Կ. Պոլիս առ Պ. Միրզա Մսերեան, Ասմա ալթը Բաբազ խանի մօտ, Թիւ 26, կամ ՚ի Զմիւռնիա՝ առ Պ. Գրիգոր Մսերեան, ՚ի Սիլվիէ խան, վերի յարկ, Թիւ 17, և կամ ուղղակի դիմել առ հրատարակիչն, իրեանց նամակաց հասցէն գրելով այսպէս. à Son Excellence M-me Sophie Missériantz, à Moscou, Menchikowa bachnia, maison Milovanoff.

Խմբագիր Խաչատուր Խաչենեանց: Հրատարակիչ Սոֆիա Մսերեանց: